


## Կիպրահայ

### Յունաստանի եւ Կիպրոսի մօտ ՀՀ դեսպան Ֆատեյ Չարչողլեանի այցը Ազգային Առաջնորդարան



Կիպրոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպան՝ Պրն Ֆատեյ Չարչողլեան Կիպրոս այցելեց պաշտօնապես ներկայացնելու համար իր հաւատարմագրերը Հանրապետութեան Լախագահ՝ Պրն. Նիկոս Անաստասիատիսի:

Այս առիթով, Երկուշաբթի, 5 Մարտ 2018-ի երեկոյեան ժամը 6:30-ին, Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ, Պրն. Դեսպանը ծանօթացման եւ պաշտօնական իր առաջին հանդիպումը ունեցաւ գաղութիս պատկան

մարմիններու եւ կառոյցներու ատենապետներուն, ներկայացուցիչներուն եւ անդամներուն հետ:

Առաջնորդարանի մուտքին, Պրն. Դեսպանը դիմաւորուեցաւ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեանի եւ Պետական ներկայացուցիչ՝ Պրն. Վարդգէս Մահտեսեանի կողմէ, որոնք ուղղուեցան դահլիճ, ուր ներկայ էին Թեմիս Կրօնական Դասն ու Երեսփոխաններ, Ազգային Վարչութեան ատենապետ եւ անդամներ, կառոյցներու, կուսակցութեանց, բարեսիրական, մշակութային, մարզական միութիւններու ներկայացուցիչներ եւ անդամներ, Կրթական հաստատութեան պատասխանատուներ եւ թերթերու խմբագիրներ:

Բարեգալուստի եւ շնորհաւորութեան ջերմ խօսքով հանդէս եկաւ Թեմիս Կաթ. Փոխանորդ Տեր Խորէն Արք. Տողրամաճեան, շեշտելով յատկապէս որ հայախօս կիպրահայ գաղութը միշտ կողքին կը մնայ Մայր հայրենիքին, անոր նեցուկ եւ զօրավիգ: Ան նշեց որ թէւ գաղութը փոքրաթիւ է, սակայն ան ունի բարձր որակ, նկատի ունենալով անոր ազգային կազմակերպուած կեանքը, ազգային կառոյցները, գործող միութիւնները, ակումբները, հայկական թերթերն ու կայքերը, հայ եկեղեցին եւ մասնաւորաբար երեք քաղաքներու մէջ աշխուժօրէն բանող Նարեկ վարժարանները՝ 228 աշակերտներով, աւելցնելով որ նշեալ դպրոցները կը վայելեն բարոյական եւ նիւթական ամբողջական հովանաւորութիւնը կիպրական կառավարութեան, ինչ որ եզակի երեւոյթ է ամբողջ սփիւռքի մէջ, ընդձեց ան:

Սրբազան Հայրը յատկապէս ըսաւ. «Մեզի համար մեծ ուրախութիւն է պաշտօնապէս Ձեզ ընդունիլ այս յարկէն ներս, որ նաեւ Ձեր տունն է: Երկար ժամանակ գաղութը «որբ» մնացած էր կամքէ անկախ պատճառներով, սակայն այսօր Ձեր պաշտօնականացմամբ վստահ ենք, որ աւելի անմիջական պիտի ըլլալ մեր կապերը: Մենք գիտենք թէ դուք որքան հարազատութեամբ կապուած էք կիպրահայ գաղութին եւ տեղեակ բոլոր հարցերուն: Անգամ մը եւս կ'ըսենք բարի եկաք Ձեր տունը եւ միասնական գործակցութեամբ պիտի շարունակենք մեր նպաստը բերել ի շահ մեր ազգին եւ Հայրենիքին: Կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ Ձեզի ուժ, կորով եւ առողջութիւն պարգեւէ, որպէսզի կարենաք հասնիլ Ձեզի վստահուած հինգ երկիրներու կարիքներուն»:



---

Պրն. Դեսպանը յայտնեց իր ջերմ գնահատանքը կիպրահայ գաղութին, որուն ձեռքբերած բարձր վարկին շնորհիւ երևաւ Կիպրոսի կառավարութեան բարեկամական վերաբերմունքը Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ:

Ան նմանապէս շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն հայրենիքի եւ դեսպանութեան հանդէպ իրենց ցուցաբերած հոգածութեան եւ կապուածութեան համար, եւ ապա լայն կերպով անդրադարձաւ Դեսպանութեան աշխատանքներուն:

Պետական Ներկայացուցիչը իր սրտի խօսքը ըսելէ ետք, ներկաները առիթը ունեցան հարցումներ ուղղելու եւ լուսաբանութիւններ ստանալու Պրն. Դեսպանին կողմէ: Անկէ ետք, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն եւ մտեմիկ ցրոյց իրարու հետ:

## «ԹՈՒՂԹԻ ՎՐԱՅ» ՑՈՒՑԱՀԱՆՐԷՍԸ ՀՈՒՐԻԿ ԹՈՐՈՍԵԱՆԻ



Այս խորագիրը կը կրէ կիպրահայ շնորհալի նկարչուհի Յուրիկ Թորոսեանի նոր ցուցահանդէսը, որուն բացումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի 14 Մարտ 2018-ին, կ.ե. ժամը 7-ին, Նիկոսիոյ S:2F2 ցուցասրահին մէջ ի ներկայութեան հայ թէ օտար արուեստասէր ընտրանի հասարակութեան մը:

Ներկայ էին Թեմիս Կաթողիկոսական Փոխ. Տէր Խորէն Արք. Տողրամաճեան, Պետական Ներկայացուցիչ Տէր Եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեան, կիպրահայ միութիւններու եւ կազմակերպութեանց

ներկայացուցիչներ եւ արուեստասէր հոծ բազմութիւն մը:

Այս նոր ցուցահանդէսով, Յուրիկ Թորոսեան իր նկարչական նոր խօսքը կ'ըսէր գոյներու եւ գիծերու արտայայտչական նոր ոճով...

Յուրիկ Թորոսեան ծնած է Կիպրոս 1967-ին, իր նկարչական կրթութիւնը կատարելագործելով Wimbledon School of Art-ի մէջ, ստացած է BA in Fine Arts ակադեմական տիտղոսը: Ապա իր ուսումնառութիւնը շարունակած է Լոնտոնի Royal College-ի մէջ, արժանանալով մագիստրոսի աստիճանին: 1994-ին՝ շրջանաւարտ ըլլալէ ետք, ան յաջորդաբար իր գործերը ցուցադրած է Կիպրոսի, Յունաստանի, Անգլիոյ, Աւստրիոյ, Գերմանիոյ մէջ եւ այլուր, արժանանալով Եւրոպայի արուեստասէր դժուարահաճ ու խստապահանջ հանրութեան բարձր գնահատանքին:

Իր այս ցուցահանդէսով, ընդամենը շուրջ 6-7 հսկայածաւալ գործերուն ընդմէջէն, նկարչուհին կը յղէ իր նոր խօսքն ու պատգամը իր ակնդիրներուն: «Կը փորձեմ այս գոյներով եւ գիծերու նոր համաչափութեամբ արտայայտել հոգեւոր աշխարհս եւ զայն փոխանցել դիտողին», ըսաւ ան, երբ իրեն հարց տուի թէ իր նոր ցուցահանդէսով ի՞նչ կը փորձէր արտայայտել, որպէս ուղերձ ու պատգամ: «Օրինակի համար», ակելցուց ան, «դիտելով Նիկոսիոյ հին ու հնաոճ «Պանայիա ֆաներոմենի» եկեղեցին, զայն կը վերարտադրեմ համաչափական գիծերով եւ գոյներով, ներշնչում քաղելով հոգեկան աշխարհես, երեւակայութենես, միջոցը ընծայելով հոգեւորութեամբ եւ սրբութեամբ լեցուն...»:

Իրաւամբ ըսուած է. «Աւանդութիւնը տեսականացման պատրանք է»: Կարծես այս է որ կ'ընէ Յուրիկ Թորոսեան: Ան կ'ուզէ պահպանել ավանդութիւնը իր անմիջական միջավայրի ճարտարապետութեան կրթողներուն թէ կառոյցներուն, մեծածաւալ թուղթի տարածքին վրայ նկարելով գոյներով եւ տարբեր համաչափութիւններով յագեցած յանդուգն պատկերներ, որոնք անմիջապէս կ'առնիչքնեն դիտողը, կը տպաւորեն զայն:



Բայց ոչ միայն այն: Ան կը հաւատայ որ գոյները աւելի պերճախօս են քան բառերը, եւ իր կարգ մը գործերուն մէջ, համակարգուած, ներդաշնակ գունային պատկերին ետին, դիտողը կրնայ ըմբռնել Յուրիկ Թորոսեանի քննադատական կեցուածքը ներկայ ընկերային-քաղաքական իրականութեան, նշմարելով՝ պաստառի ետին թաքնուած, մամուլէն առնուած յօդուածներու հատուածներ, եւ յանկարծ կարդալ նախադասութեան մը աղաղակը, ինչպէս՝ «Կեղեքողները հարստացան», «Շաքարի փոխարէն «քարեր» կը շարտեն», «Սեւ ծուխը, բայց նաեւ լուսամուտը», որոնք կ'ակնարկեն ներկայ կիպրական կեանքի ընկերաքաղաքական պայմաններուն ետին ճշացող իրականութեան...

«Թուղթին վրայ» ցուցահանդէսը թարմ շունչ մըն է, գոյնի եւ գիծի մտածողութեան յանդգնութիւն, ստեղծագործական սրտբաց արարում, ուր հոգեւոր ապրումները նոր թռիչք կ'առնեն, առանց «իզմ»երու խանգարիչ մտակաղապարներու:

Իր այս նոր ցուցահանդէսին առիթով, ջերմօրէն կը շնորհաւորենք կիպրահայ տաղանդաւոր նկարչուհին, Յուրիկ Թորոսեանը, իրեն մաղթելով ստեղծագործական անխոնջ եռանդ ու կորով եւ նորանոր արարումներ՝ յաջողութեամբ պսակաւոր:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Խմբագրական

### ՀԱՅ ՄԱՅՐՆ Է ՈՐ ԿԸ ԿԵՐՏԷ ԱԶԳԻ ԱՊԱԳԱՆ



«Մայրերու ափին մէջ պիտի փնտռել ազգերու ճակատագիրը»-  
Գարեգին Նժդեհ

Մարտ ամիսը մեզի մտածել կու տայ հայ կնոջ եւ ի մասնաւորի հայ մօր մասին, քանզի յայտնի ճշմարտութիւն է, որ կնոջ գերագոյն առաքելութիւնը մայր ըլլալն է՝ սերունդներու ծնուցիչն ու սնուցիչը, անոնց առաջին եւ գերագոյն դաստիարակը: Մօր կաթին հետ միատեղ մանկան մէջ կը ներծծուին, արդարեւ, սեր ու բարութիւն, ազնւութիւն ու վեհանձնութիւն....Մօր «օրօրոցային» երգերուն հետ, մանկան մէջ կը սերմանուին քաջութիւն ու հայրենասիրութիւն, մաքառելու եւ պայքարելու ոգի, անմաքորդ սեր հայոց լեզուին եւ մեր բարոյական արժեքներուն, աւանդութիւններուն...: Մօր առօրեայ կենցաղն ու վարքագիծը, անոր դրսեւորած առաքիւնութիւնները ներշնչող օրինակ կը դառնան մանկան ու պատանիին, եւ անշուշտ՝ հակառակը, անոնց բացակայութեան պարագային: Ի զուր չէ որ Սիլվա Կապուտիկեան՝ մեծ բանաստեղծուհին, շեշտած է. «Մայր, դարեր սուրբ է եղել քեզ համար գիր ու օճախ, Դու քո շնչով ես պահել մեր հին ոգին կենդանի»:

Մեր փոթորկայոյզ պատմութեան ամբողջ երկայնքին, հայ մայրը, թէ՛ իր առողջ բնագոյով ու իմաստութեամբ, թէ՛ բարձրագոյն ինքնագիտակցութեամբ եւ զոհաբերումով, կրցեր է բարձր պահել իրեն վստահուած մարդակերտումի եւ ազգակերտումի ծանրագոյն պատասխանատուութիւնը, նոյնիսկ ամենէն անողոք պայմաններու տակ, ընդ հուր եւ ընդ սուր, եւ ազգային-հայրենասիրական ոգին փոխանցեր է իրերայաջորդ սերունդներուն: Որքան դիպուկ կը հնչեն հանճարեղ վիպասան Ռաֆֆիի խօսքերը. «Կինը մեզ տուեց լեզու, ազգութիւն, ամրապնդեց ընտանիքի բարոյական հիմունքները»:

Պերճախօս են մեր պատմութեան քանի մը օրինակները այս գծով: Յիշենք՝ Վարդանանց պատերազմէն ետք, հայ փափկասուն Տիկնանց յանձն առած զոհողութիւնները, ինչպէս նաեւ պատասխանատուութիւնները՝ Սուրբ Վարդանի հետ նահատակուածներուն փոքր երեխաները կրթելու գործով, ինչպէս կը գրէ Ղազար Փարպեցի, ակնարկելով յատկապէս Վարդանի Զմայեակ եղբօր կնոջ, որ իր մտաւոր բարձր զարգացումով « մեծցուց եւ դաստիարակեց իր երեք զաւակները՝ Վահանը, Վասակը եւ Արտաշէսը...», որոնց մէջ «Վահան իր մօր խորհուրդներով սնած, իտեալներով տոգորուած մեծ հայ մը եղաւ»: Նմանապէս, Ձուրիկ տիկինը յանձն առաւ, ինչպէս կը գրէ ԼԵՕ, ոչ միայն գերութենէ ազատած զաւակներուն դաստիարակութեան գործը, այլ ամբողջ դպրոց մը բացաւ դաստիարակելու համար պատերազմէն որբ մնացած Մամիկոնեաններուն եւ Կամսարականներուն զաւակները:



Յիշենք՝ 19-րդ դարու հայկական Չարթոսքի սերունդին յառաջադեմ հայուհիները՝ Սրբուհի Տիւսաբ, Սիպիլ, Չապել Եսայեան, Արշակունի Թեոդիկ եւ ուրիշներ, որոնք հիմնադրեցին « Ազգանուէր Յայուհեաց Միութիւնը» եւ օրիորդաց դպրոցներ բացին հայկական գաւառներու մէջ, խորապէս հաւատալով որ «Ազգի մը սիրտը կինն է», եւ անոր առողջ ու առողջ բաբախումէն կախեալ են ազգի լիարհիւս կենսունակութիւնը, անոր յառաջընթացն ու ազատագրումը:

Յիշենք՝ Եղեռնի սեւ օրերու անանուն հայ տարագիր մամիկները, որոնք Տէր Չօրի գորշ աւագին վրայ, իրենց կմախքացած ձեռքերով դրոշմեցին «Այբ-Բեն-Գիմ»ը, զայն կտակելով յաջորդական սերունդներուն որպէս ազգի փրկութեան լաստ, հայեցի լինելութեան բանալի:

Ազգերը կը յարատեւեն պատմութեան մէջ եւ մեծ կ'ընծայուին, արդարեւ, երբ անոնց գաւակներուն ծնունդ ու սնունդ տուող առաջին եւ գերագոյն դաստիարակները, մայրերը, իրենց սեփական կերպարով, հոգեկերտուածքով, վարք ու բարքով ու դաստիարակութեամբ՝ մատղաշ հոգիներուն մէջ կը բոցավառեն ազատ այլեւ պատասխանատու, արժանապատիւ ու քաջակորով, ազնիւ եւ հայրենասուէր, արդարամիտ եւ արհասիրտ վարքագիծով ապրելու տենչն ու տենդը...

Եթէ կրցեր ենք դիմակայել հայոց պատմութեան անթիւ ու անհամար հարուածներուն, պահել անաղարտ հայ հոգին ու ինքնութիւնը, ատիկա կը պարտինք մեծաւ մասամբ հայ մօր եւ անոր շնորհիւ անխաթար մնացած հայ ընտանիքին, որուն ամրութիւնը այժմ եւ ընդմիշտ գերագոյն գրաւականներէն մէկն է ազգային պետականութեան հզօրութեան, հայ լինելութեան երթին...

Արագընթաց եւ յարափոփոխ մեր ժամանակներուն, համաշխարհայնացման լափիլզող յորձանքը, նիւթապաշտ եւ օգտապաշտ մտայնութիւնը, ազատութեան եւ մարդկային իրաւունքներու անունով ի յայտ եկած տարականոն եւ այլանդակ երեւոյթները կը սպառնան այլասերել հայ կնոջ կերպարն ու հոգեկերտուածքը..., շրջիվայր փոխել նոյնպէս հայ ընտանիքի պատկերը, քայքայել զայն:

Այսօր ի՛նչ-ի՛նչ մարտահրաւերներու դեմ յանդիման կը գտնուին հայ մայրն ու հայ ընտանիքը, երբ օրէ ցօր կը բազմանան օտար ամուսնութիւնները, ամուսնալուծումները, ծուլման եւ այլասերման սպառնալիքները, օտար ու խորթ բարքերն ու ապրելակերպը..., ինչ որ կը պահանջէ առաւել մեծ զգօնութիւն եւ գիտակցութիւն, մաքառելու եւ պայքարելու կամք, առաւել մեծ հմտութիւն նաեւ, քանզի ինչպէս դիտել կու տայ մեծ մանկավարժ Պօղոս Գեորգեան, ծնողագիտութիւնը ( ես պիտի ըսէի ի մասնաւորի մայրագիտութիւնը) Եական է ճիշդ դաստիարակելու համար մատղաշ հոգիները, եւ կ'արձանագրէ. «Ըլլա՛ս ծնող, ուսուցիչ թէ դաստիարակ, դաստիարակեա՛ր զանձն քո»: Ասիկա յատկապէս կը վերաբերի հայ մայր ըլլալու պատրաստութեան կամ ճիշդ կրթութեան, զոր պէտք չէ թողուլ ինքնահոսի եւ պատահականութեան:



Հրատապ եւ կարեւորագոյն խնդիր կը դառնայ որոշապէս՝ ապագայ մայրերու, այսօրուան օրհորդներու ազգային ճիշդ դաստիարակութիւնը, քանզի այսօրուան եւ յետագայ մայրերէն Է կախեալ, գերազանցօրէն, ազգի եւ հայրենիքի հզօրութիւնը, ազգային պետականութեան ամրութիւնը: Մեր հաւաքական լինելութիւնն ու ապագան:

Համաշխարհայնացման համահարթեցնող, ազգ ու մշակոյթ, ինքնութիւն ու ընտանիք քայքայելու եւ ջնջելու միտող խաւարամած յորձանքին ընդդէմ, ազգային հրամայական գերխնդիր Է դրուած ՝ օդի, ջուրի նման կենսական, վերագտնելու, վերիմաստաւորելու Հայ Մօր կերպարի, հոգեկերտուածքի եւ առաքելութեան լուսեղէն եւ ոգեղէն խորհուրդը, որպէս ազգի ու հայրենիքի յարատեւման էական եւ առանցքային երաշխիք:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Հարցազրոյց

### ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ԵՐԳԻԾԱԲԱՆ ԵՒ ԴԵՐԱՍԱՆ ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ



«Սփիւռքն անլին է՝ կենսական ուժ է, արեան հոսք, սիրտ, ուղեղ՝ ամէն ինչ...»

Վարեց՝ ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ

Երկարատեւ ստեղծագործական եւ բեմական դադարից յետոյ, երգիծաբան, դերասան Վարդան Պետրոսեանը Լոս Անջելեսի հանդիսատեսին ներկայացաւ իր նոր՝ «Իմ Կիսատ Թողած Երգը»

ներկայացմամբ: Ստորել՝ «Ասպարեզ»ի բացառիկ հարցազրոյցը սիրուած արուեստագետի հետ.

ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.- Ինչի՞ մասին է ձեր կիսատ թողած երգը:

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.- Իմ բոլոր ներկայացումները մեր կեանքի մասին են, ինչ-որ ձեւով ներկայացնում են մեր առօրեան, հոգսերը, ապրումները, նաեւ, անպայման՝ մեր երազանքները: «Իմ Կիսատ Թողած Երգը» կիսատ թողածս ներկայացումս էր: Բանս այն է, որ երբ իմ անտոյժարը տեղի ունեցաւ, որ դարձաւ համաշխարհային իրադարձութիւն, յաջորդ օրը ես ներկայացում ունեի, եւ այն անարտուում էր երգով: Երգում էի հանդիսատեսի հետ միասին, եւ այն կիսատ մնաց: Կիսատ մնաց նաեւ այն իմաստով, որ կիսատ մնաց մի կեանք, կիսատ մնացին նաեւ երկու կեանքեր... սա բաւական խորհրդանշական է, եւ երբ դուրս եկայ կալանքից, անպայման ցանկացայ շարունակել հէնց այս ներկայացումով: Այն իմ մասին է՝ իմ կալանքի պատմութիւնն է բաւական զաւեշտական դրուագներով, որ ներկայացնում եմ իմ ոճով՝ մարդկանց հետ խօսում եմ ամենատառապալի, ամենածանր երեւոյթներից ծիծաղով, բայց նաեւ մտածելու տեղիք եմ տալիս տալ: Իրականում, այն նաեւ իւրաքանչիւր հայ կալանաւորի պատմութիւնն է ինչ-որ տեղ: Բացի այդ, ներկայացումը մարդկային ամենախորը յարաբերութիւնների մասին է, որոնց մասին գուցէ եւ չգիտենք: Առանցքում կիսագիտակից վիճակում գտնուող մարդ է, ում, փողկապներով, առաքինի ներկայացող մարդիկ զցում են բանտ՝ սեւազգեստ «վայրի գազանների» մօտ եւ չեն մտահոգւում, արդեօք նա կենդանի կը մնայ թէ ոչ: Եւ յանկարծ պարզւում է, որ այդ «գազանները» որպէս մարդ անլի բարձր են, որովհետեւ առանց հետաքրքրուելու, թէ ով է վիրաւորը, ընկածին բարձրացնում են, զուրգուրում, խելքի բերում: Կարծում եմ, ներկայացումից յետոյ, մարդիկ դուրս են գալիս զուարճանալուց, տխրելուց բացի՝ նաեւ մտորումներով այն մասին, թէ մարդկայնութիւնն իրականում որտեղ է գտնուում: «Իմ Կիսատ Թողած Երգը» ուրեմն, մեր հոգսերի, մեր երազանքների, մեր կիսատ մնացած ապրումների շարունակութիւնն է: Մի նոր սկիզբ, որը ես կ'ուզեի, որ այլեւս երբեք կիսատ չմնար:





**ՆԱՆԵ ԱԲԱԳԵԱՆ.-** Ձեր երկու ներկայացումների տոմսերը Լոս Անջելեսում անմիջապես սպառուեցին, եւ ակելացուեց ներկայացման եւս մէկ օր: Սա խօսում էր նաեւ ձեր հանդիսատեսի կարօտի ու սպասման մասին: Տարիների դադարից յետոյ, առաջին անգամ բեմ բարձրանալով ի՞նչ զգացումներ ունեցաք, եւ ինչո՞ւ էիք ընտրել Լոս Անջելեսը որպէս առաջին ներկայացման վայր:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.-** Ես շատ երջանիկ արուեստագետ եմ ինձ համարում, որովհետեւ միշտ ունեցել եմ մեծաթիւ հանդիսատես, եւ խնդիրը քանակի մեջ չէ: Երբ դուրս եկայ կալանքից, ինձ մի լրագրող հարցրեց, թէ ի՞նչ ունեմ ասելու երկրպագուներին, ովքեր միշտ իմ կողքին էին ու սպասում էին: Ես պատահանեցի, որ երկրպագուներ չունեմ՝ այլ ունեմ հարազատներ: Իմ փոխարարբերութիւնը իմ հանդիսատեսի հետ դերասանի եւ երկրպագուի յարաբերութիւնն է՝ այլ հարազատի, որ վերջին տարիներին առաւել ամրացաւ:

Վեց տարի է, որ չէի եղել Լոս Անջելեսում, եւ հինգ տարի է, որ բեմ չէի բարձրացել, եւ շատ յուզուած էի, երբ պատկերացնում էի մեր հանդիպումը: Հոգեբանօրէն պատրաստուել էի, որ ինքս էլ չխառնուէի, որովհետեւ սպասում էի բուռն ընդունելութեան, քանզի այդ նոյն կարօտը ես ունեի մարդկանց ու բեմի նկատմամբ: Հիւրախաղերիս համար առաջին երկիրն ընտրեցի Լոս Անջելեսը, նախ որովհետեւ իմ ծանր օրերին այստեղ բնակուող իմ ընկերներն ու նոյնիսկ մարդիկ, ում ես չէի ճանաչում ինձ շատ օգնեցին, նաեւ նիւթապէս: Բաւական բարդ է չորս տարի կալանաւոր պահել: Եւ առաջինն այստեղ գալով, ցանկացայ արտայայտել խորին երախտագիտութիւնս նրանց: Երեւանից յետոյ իմ երկրորդ ամենաշատ հանդիսատեսն այստեղ է, եւ Փետրոսարի Յին, երբ դուրս եկայ բեմ, բաւական երկար չէին դադարում ծափահարութիւնները, իմ կոկորդն էլ սեղմուում էր: Իմ ու հանդիսատեսի զգացողութիւնները փոխադարձ էին:

**ՆԱՆԵ ԱԲԱԳԵԱՆ.-** Դուք այն մտաւորականներից էք, ով երբեւէ չի կաշկանդուել ճշմարիտ գոյներով ներկայացնել իրականութիւնը, նաեւ՝ քննադատել: Միաժամանակ, հաւատարիմ արուեստագետի ձեր կոչմանը, փորձում էք ցոյց տալ լուծումներ: Ո՞րն է այսօր ելքը մեր հայրենիքի համար՝ համատարած յուսալքութեան, հաւատի բացակայութեան պայմաններում:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.-** Երբ ինձ ասում են մտաւորական՝ մի տեսակ եմ լինում: Մտաւորականներն այն մարդիկ են, ովքեր անընդհատ մտածում են, մտածելը նրանց կենսակերպն է: Ես այդքան մեծ մտածող չեմ: Ինձ համար մտաւորականն իմ հայրն էր եւ նրա սերնդակիցները, ովքեր բացառիկ մտաւորականներ էին՝ շատ կարդացած էին, շատ խոհեմ: Յիշում եմ, թէ ինչպէս էին հայրս ու մայրս տանը խօսում միայն գրական, մարգարտաշար հայերէնով: Նրանք ապրում էին համեստ, անտրտունջ:

**ՆԱՆԵ ԱԲԱԳԵԱՆ.-** Մենք ինչո՞ւ ենք տրոստոյում:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.-** Նիւթական կեանքն ունի օրէնքներ, որին մենք չենք կարող յաղթել: Որքան մարդու յարմարաւետութիւնը շատանում է, այնքան մարդու տրտունջն էլ ակելանում է: Ընդհանրապէս մտաւորականների փոքրիկ խաւը, որ արդէն դասակարգ չէ, կամաց



կամաց վերանում է, եթե չասեմ վերացում է: Այնպիսի պայմաններ են ստեղծում, որ մտաւորականները սկսում են քչանալ: Մտաւորականներն ընդհանրապէս նման են այգու ծաղիկների, վարդերի, նրանք աւելի նուրբ են, քնքուշ են, եւ մոլախոտը կարողանում է նրանց իրենով անել:

**ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.**- Իսկ ո՞րն է ելքը:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.**- Այսօր ամբողջ աշխարհն է ելք փնտռում, բայց տպաւորութիւն ունեմ, որ ելքը փնտռում են այլ տեղերում: Ես կարծում եմ ելքը, ելք փնտռելու մէջ է: Մեր ամենամեծ խնդիրը, եւ ոչ միայն Հայաստանի՝ այլ աշխարհի, որի մի փոքրիկ մասն էլ մենք ենք, հոգեւորի պակասն ու իսպառ բացակայութիւնն է, որ յանգեցնում է նրան, ինչ այսօր ունենք: Եւ մենք այսօր պայքարում ենք ոչ թէ հոգեւորը վերադարձնելու, այլ հակառակը՝ Նիւթական աշխարհում էլ աւելի մեծ յարմարաւետութիւն ձեռք բերելու համար: Նիւթական աշխարհում յարմարաւետութիւն ձեռք բերելը, վայելքի ձգտումը, ինչպիսի անուններով էլ այն ներկայանայ՝ քաղաքացիական հասարակութեան կերտում, մարդկային իրաւունքների պաշտպանութիւն, որ իրականում դրական երեւոյթներ են, բայց բերում են այսօրուայ հետեւանքներին, պայքարի ձեւերի պատճառով: Ինչպէս ասում էր Քրիստոսը՝ թուր վերցնես, թրով էլ կ'ընկնես: Մենք այսօր աշխարհին նայում ենք զայրացած, առաւօտեան արթնանում ենք աշխարհի, մարդկանց նկատմամբ ատելութեան զգացումով, երանութեամբ յիշում ենք անցեալը, չենք սիրում նոյնիսկ մեր սիրելի մարդկանց: Փորձում ենք փոխել նրանց նախատելով, դատապարտում ենք՝ ծնողը զաւակին, զաւակը՝ ծնողին ջղայնանալով, հայիոյելով, ուզում ենք խելքի բերել նրանց:

Յեխ շարտելով մարդու վրայ, ոչինչի չենք հասնի, այլ պետք է զգուշօրէն, սիրով մօտենանք, ինչպէս օրինակ արուեստի գործերի վերականգնողները, ովքեր այնպէս ծայրայեղ քնքշութեամբ են մօտենում գլուխ գործոցին, մինչեւ այն բոլորովին բացայայտեն: Այսինքն, մարդուն էլ պետք է սիրով մօտենայ, բացասականը մաքրել՝ մինչեւ տեսանելի լինի նրա հոգու փոքրիկ լոյսը, որ ամէն մարդու մէջ կայ: Իւրաքանչիւրի մէջ Աստուծոց մի մոլեկուկ կայ, եւ սա պետք է սիրով ու ջերմութեամբ բացայայտել, մինչդեռ ջարդելով, փշրելով այն չես տեսնի երբեք: Մայր Թերեզան ասում էր. «Ուզում ես աշխարհին լաւութիւն անել՝ գնա քո ընտանիքին, քո հարազատներին սիրիր ջերմօրէն», սա է լաւագոյն լուծումը:

**ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.**- Յատկապէս, որ քրիստոնէական արժեհամակարգը հայ մարդու գենետիկ կողում է:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.**- Այո, սիրիր դիմացինիդ ինչպէս ինքդ քեզ: Իմ կեանքն ինչպէ՛ս դասաւորուեց: Իմ կալանակից ընկերները, որոնց հետ ես շատ ջերմ յարաբերութիւններ եմ պահպանում, այդպէս վարուեցին ինձ հետ՝ հոգ տարան վիրաւորին, ինչպէս բարի Սամարացին: Սա է ամենամեծ պատգամը: Խնդիրն այն է, որ ժամանակի ընթացքում, դիմացինին սիրելու մեծագոյն պատգամը կամաց-կամաց սկսեց մոռացուել, եւ իմ նոր ներկայացման ընթացքում փորձում եմ այս պատգամը փոխանցել:



Ներկայացման վերջում էլ անում եմ մի բան, որ ամենակարեւորն եմ համարում այսօր հայ մարդու համար որպէս ելք: Հայը, ունենալով մեծ սիրտ, միաժամանակ ներքուստ ամաչկոտ է, կաշկանդուած: Ես հանդիսատեսին խնդրում եմ իրար ձեռք բռնել, եւ միասին երգում ենք, եւ այդ պահին բոլորը կարծես դառնում են մի մարդ: Մենք տառապած, տանջուած, դառնացած ժողովուրդ ենք, եւ այդ երգի ժամանակ երբ նայում եմ դահլիճին, եւ տեսնում եմ, թէ որքան յուզուած են, արտասուում են, հասկանում եմ, թէ որքան կարիք ունենին, որ ինչ-որ մէկը վեր հանի այն՝ ինչ չեն արտայայտել: Սօս Սարգսեանը մի անգամ ասաց, որ երբ հայերը իրար ձեռք բռնած երգեն՝ մեզ այլեւս յաղթել չի լինի: Մարդկանց փրկութեան ելքը միասնութեան մէջ է, բայց միասնութիւն շատ կոնկրետ նպատակով՝ այդ միասնութիւնն անպայման դէպի լոյսը պիտի տանի, դէպի բարութիւն, դէպի մեծ սեր դիմացիկի նկատմամբ: Սեր է, երբ ներկայացման վերջում մարդիկ ցանկանում են իրար գրկել, իրար ձեռք բռնել, եւ ելքը հենց սա է:

**ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.-** Ձեր հանդիսատեսը նաեւ հայրենիքը սիրող ու հայրենիքի խնդիրներով մտահոգ հայն է: Ինչպե՞ս է կարող այսօր սփիւռքահայը մասնակցել հայրենիքի ու ազգային խնդիրների լուծմանը:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.-** Այն հանդիսատեսը, ով գալիս է իմ ներկայացումներին, որին ես կարող եմ ասել իմ հանդիսատեսը՝ գալիս է իմ հետ կիսելու եւ կիսուելու, հասկանալու միասին, թէ ի՞նչ պիտի անենք, ինչպե՞ս: Սա լուրջ քաղաքական հարց է: Սփիւռքի մասին շատ կոպիտ եւ տիպական համեմատութիւն են անում, որ ինչ-որ տեղ ճիշդ է՝ ասում են ադրբեջանցիները ունեն նաւթ, մենք ունենք Սփիւռք: Իհարկէ, Սփիւռքն աւելին է՝ կենսական ուժ է, արեան հոսք, սիրտ, ուղեղ՝ ամէն ինչ: Հայաստանի մի մեծ ստուար մասն ապրում է Հայաստանից դուրս, ինչպէս ինքս, անձնական կեանքի բերումով, որովհետեւ կինս սփիւռքահայ է: Ես ականատես եմ եղել, թէ որքան նուիրուած է, պատրաստակամ է սփիւռքահայը, կնոջս հայրն, օրինակ: Ցաւօք, Հայաստանից չի կազմակերպուել այն ճիշդ քաղաքականութիւնը Սփիւռքի նկատմամբ, որն այնքան անհրաժեշտ է: Աշխատանքները պէտք է կազմակերպուեն մի կենտրոնից, որը կարող է լինել աշխարհի որեւէ անկիւնում, սակայն Հայաստանը պէտք է լինի ուժերի կենտրոնացնողը, եւ ճիշդ օգտագործի այն ահռելի ռեսուրսը, որը մենք ասում ենք Սփիւռք:

Սակայն՝ հակառակը, Հայաստանի իշխանութիւնները, մարդիկ ովքեր կառավարում են այդ փոխյարաբերութիւնները, այդ քաղաքականութիւնը, նրանք Սփիւռքին դիտարկում են, ինչպէս լուսահոգի աներս էր ասում՝ որպէս կթան կովի: Մենք Սփիւռքին կթում ենք, կաթը վերցնում, եւ հասկացնում, որ դրանից աւելին իրաւունք չունի անելու: Նուազեցնում ենք մեր յարաբերութիւնները՝ սահմանափակելով ընդամենը նիւթական օգնութեամբ, եւ նոյնիսկ դա էլ՝ ճիւղային մակարդակի ենք հասցնում. վկայութիւնը՝ բազմաթիւ գործարարները, ովքեր Հայաստանից հեռացել են վիրաւորուած, հիասթափուած եւ յուսախաբուած:

Սա այն քաղաքականութիւնն է, որ Հայաստանը ցաւօք վարում է Սփիւռքի նկատմամբ: Այդուհանդերձ, Սփիւռքի ներկայութիւնը կայ Հայաստանում, կայ այդ օգնութիւնը, որի մասին շատերը գիտեն բայց չի խօսուում: Ես միայն ցաւով եմ նշում, որ մեր տառապանքից, մեր դժբախտութիւնից ծնուած զանձը, որովհետեւ Սփիւռքը ստեղծուեց Ցեղասպանութեան



հետեւանքով, չի օգտագործուում: Մենք ունենք մի հսկայ գանձարան, մարգարիտներով սնդուկ, որ անտեսում ենք:

**ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.**- Այս դեպքում լուծում կարո՞ղ է լինել ինքնակազմակերպումը:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.**- Այո, բայց ցաւօք ինքնակազմակերպումը մեզ մօտ բուն կերպով տեղի է ունենում միայն, երբ հարցը վերաբերում է թուրքի դեմ ճակատամարտին: Երբ քառօրեայ պատերազմը սկսուեց, ես բաց կալանքում էի (այդ ընթացքում իրաւունք ունեի կալանավայրից դուրս գալ աշխատանքի գնալու, եւ երեկոյեան վերադառնալ), եւ երբ գնացի աշխատանքի՝ գրեթէ տղամարդ չկար, բոլորը գնացել էին Արցախ: Մի կալանաւոր ունեինք, ով դաշնակցական էր, Արցախեան պատերազմի մասնակից փոխգնդապետ, ով նոյնպէս բաց կալանքում էր, ու չնայած պատժաչափի աւելացման սպառնալիքին՝ մեկնեց ճակատամարտ: Կալանավայրում էլ, երիտասարդներն արդէն կազմակերպում էին, ջոկատներ էին կազմում: Եւ այս ամէնը տեղի էր ունենում պայմաններում, երբ չորս օրերի ընթացքում ոչ մի պաշտօնեայ հեռուստացոյցով հանդէս չեկաւ, կազմակերպման որեւէ կոչ չարեց, անհաւատալի ինքնակազմակերպում էր, եւ շատ էի զարմացել մեր կենսական ուժերի վրայ, եւ քառօրեայ պատերազմի յաղթական ելքի, որ ապահովեցին մեր քսանամեայ երիտասարդները:

Ինքնակազմակերպման ուժը մենք ունենք, եւ սա երեւի գենետիկ ուժ է, եւ չգիտեմ, թէ ինչ ուժով են կարողացել ծնողները դաստիարակել նման սերունդի, որ նման կամք ու քաջութիւն ցուցաբերեցին: Սակայն, այս ամէնը մեզ մօտ արտայայտուում է միայն ծայրայեղ իրավիճակներում, երբ առկայ է թշնամու կողմից իրական սպառնալիք: Իսկ երբ հանգիստ վիճակում ենք, յարմարաւետութիւնը թմրեցնում է: Յատկապէս Սփիւռքում, երբ երեխաներն այլ կրթութիւն են ստանում, յետոյ՝ տուեալ երկրի մշակոյթի կրողն են դառնում, եւ ձուլւում:

Անհրաժեշտ է քաղաքականութիւն մշակել, որպէսզի հայրենիքից դուրս բնակուող պատանին ու երիտասարդը Հայաստանի հետ կապուած լուսաւոր կետը չկորցնեն: Այնիչև, արդեօք այսօր հակառակ քաղաքականութիւնը չի՞ իրականացւում:

**ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.**- Վերջին 25 տարիներին հիմնականում բնակուելով Ֆրանսիայում, երբեւէ չէք կտրուել հայրենիքից, ազգային խնդիրներից, եւ մշտապէս քաջատեղեակ էք ու սրտացաւ ազգային հարցերի նկատմամբ:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.**- Ես ծնուել եւ մինչեւ 33 տարեկանս ապրել եմ Երեւանում, այսինքն՝ հողին կապուած եմ, կապուած եմ արիւնով, դաստիարակուել եմ այնտեղ, եւ շատ բան եմ վերցրել հայրենիքից: Երբ 1992թ.ին տեղափոխուեցի Փարիզ, կապս երբեւէ չկտրուեց Հայաստանի հետ: Իհարկէ այն ժամանակ հաղորդակցման զարգացած միջոցներ, համացանց, նոյնիսկ հեռախօսակապ չկար, բայց ես նամակներ էի գրում տասնեակ էջերով, եւ պատասխան մանրամասն նամակներ էի ստանում:

Ինչպէս Սարոյեանն է ասում՝ «Իմ սիրտը լեռներում է», իմ սիրտը Հայաստանում է: Կարող ես ապրել մի երկրում, որ շատ հարուստ է, բազմագոյն, ունի հզօր մշակոյթ, բայց գիտես, որ սրտիդ մասնիկը գտնուում է մի երկրում, որտեղից դուրս ես եկել: Ես միշտ սնուել եմ



Հայաստանից, եւ որպէս երախտագիտութիւն միշտ փորձել եմ ինչ-որ չափով սնել նաեւ, ինչ-ոչ չափով իհարկէ, որովհետեւ դա համեմատելի չէ, թէ ինչ է Հայաստանը տուել, եւ թէ ինչ եմ ես տալիս, դրա մասին չէ խօսքը, որովհետեւ դա ովկիանոսի մէջ մի կարթիլ զգելու է նման, բայց փորձել եմ ինչ-որ ձեւով երախտահատոյց լինել:

**ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.**- Ստեղծագործական ի՞նչ այլ ծրագրեր ունէք:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.**- Վերադարձել եմ Փարիզ, որտեղ իմ ստեղծագործական գլխաւոր փուլն իմ ընտանիքն է: Հանդիպել եմ ընկերներին, ովքեր ինձ ու ընտանիքին սատարել էին կալանքիս ողջ ընթացքում: Մասնագիտական առումով, կնոջս հետ, ով դերասան-բեմադրիչ է, եւ դասաւանդում է բեմական արուեստ, ու իմ մի քանի դերասան ընկերների հետ միասին թատերական ծրագիր ենք պատրաստում, որ կը ներկայացնենք Փարիզում, եւ ֆրանկոֆոն երկրներում: Նաեւ, գիրք եմ գրում իմ կալանքի տարիների մասին, որ կոչւում է «Սկիզբ», որովհետեւ կալանքն այնպիսի շրջադարձային պահ է մարդու կեանքում, որ դրանից յետոյ սկսում ես նոր կեանք ապրել: Գլխաւորը, որ ասելիք կայ: Ճակատագրական դէպքերից յետոյ, մարդու խօսքը կամ ընդհանրապէս կտրուում է, կամ բազմապատկւում է: Ես բախտաւոր եմ, որ Աստուած ինձ ոչ թէ դատարկեց, այլ՝ լցրեց, եւ ես պարտաւորուած եմ զգում արտայայտուելու: Այդ գիրքը, որ գրում եմ, ցանկանում եմ, որ դեղամիջոց լինի, ինչի միջոցով ծանր օրեր ապրող մարդը մխիթարութիւն գտնի: Յուսամ, Աստուած կ'օգնի:

**ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ.**- Ո՞ր արժէքներն են առաջնային ձեր նոր սկզբում:

**ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.**- Հոգեւոր արժէքները: Դուք ինձ անուանեցիք մտաւորական, իսկ մտաւորականը նա է, ով բոլոր իրավիճակներում գերադասում է հոգեւոր արժէքները նիւթականից: Ես այդպէս պետք է շարունակեմ, դա եմ հասկացել: Միզուցե այդպէս մտածել եմ, բայց հիմա միանգամայն համոզուած եմ, որ հոգեւոր ընթացքն է մեզ առաջ տանելու, առաջնորդելու դէպի ճիշդ ուղին: Հոգեւորը տանում է բարդ տեղ, դէպի մի փոքր դուռ, ուր շատերը չեն կարողանում մտնել, բայց հոգեւոր ուղին է, որ լիութիւն է տալիս մարդուն, երջանկութիւն, բերկրանք, մօտեցնում է լոյսին: Այսինքն, պետք է փորձեմ այդպէս ապրել եւ իմ ներկայացումներով, իմ խօսքով մարդկանց այդ ուղերձը փոխանցել:

## Յօդուածներ

### Բարոյագիտական

### ԵՐԿՈՒ ՎՍԵՄ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ԵՆ՝ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ – ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

### Մերթ Գ. Տէրտէրեան



Բարոյագիտութիւնը՝ բնագանցական կամ վերացական, եւ հասարակական կեանքէն անջատ եւ անկախ, ինքնանպատակ ու տեսական ուսմունք մը չէ, այլ՝ անմիջականօրէն կապուած է հասարակական կեանքին հետ, եւ՝ անոր վարքագիծը սահմանող ուղեցոյց մըն է, եւ ոչ թէ սոսկ կրօնական պատուիրան:

Յետեւաբար, բարոյագիտութիւնը սերտօրէն կապուած է՝ հասարակական կեանքի եւ գործունեութեան բոլոր՝

ընկերային, ընտանեկան, տնտեսական, քաղաքական, ռազմական եւ մշակութային մարզերուն հետ: Այս համընդգրկուն բնոյթը ունի նաեւ՝ իրաւագիտութիւնը:

Ուրեմն, յիշեալ երկու գիտութիւնները անջատ եւ անկախ չեն իրարմէ, այլ՝ իրարու հետ Նոյնացած են, ոչ թէ ձուլումի, այլ ընդելուզումի եղանակով, միաժամանակ պահպանելով իրենց զուգահեռ եւ իրար լրացնող ներկայութիւնը: Իրաւագիտութիւնը իբր հիմք եւ գերագոյն նպատակ կը շեշտէ արդարութիւնը եւ մարդոց իրաւահաւասարութիւնը, իսկ բարոյագիտութիւնը իբր հիմք եւ գերագոյն նպատակ կը շեշտէ խաղաղութիւնը եւ մարդոց ու ժողովուրդներու եղբայրակցութիւնը: Այլ խօսքով՝ երկու գիտութիւններն ալ կը մեկնին մարդոց եւ ժողովուրդներու իրաւահաւասարութեան հիմնական սկզբունքէն. մէկը կը շեշտէ իրաւունքի հաւասարութիւնը, միւսը՝ հաւասարներու եղբայրակցութիւնը: Անարդար դատաւորը՝ անբարոյ մըն է: Պատերազմի հրծիգը՝ անբարոյ մըն է: Նոյնիսկ՝ անարդար «խաղաղութիւնը», ինչպէս օրինակ՝ 1918 թ. Պաթումի իբր թէ «խաղաղութեան» դաշնագիրը, անբարոյական է, քանի որ անիրաւ է, անվաւեր: Ճշմարիտ եւ իրաւ խաղաղութիւնը պարտի արդար ըլլալ, այլապէս՝ չի կրնար մնայուն ու վաւերական ըլլալ (ի դէպ՝ Վահան Թեքէեան իր «Աղօթք Վաղուան Սեմին Առջեւ» քերթուածին մէջ խաղաղութիւն մաղթելով Բ. Աշխարհամարտի օրերուն, կը ճշդէ իրաւացիօրէն. «Եւ թող շուտով հաստատուի խաղաղութիւնը ԱՐԴԱՐ...»): Հոս արդէն գեղեցկօրէն ընդելուզուած են խաղաղութիւնն ու արդարութիւնը: Հին ժամանակներու մեծագոյն փիլիսոփաներէն, բարոյագետներէն եւ իրաւագետներէն Յելլէթիոսը ըսած է. «Այն բարոյագիտութիւնը, որ հիմնուած չէ իրաւագիտութեան վրայ, անբարոյական է»:

Ուրեմն, ամէն խտրականութիւն՝ սեռի, ժողովուրդի, ազգութեան, ցեղի, լեզուի, կրօնի, գաղափարախօսութեան, կամ՝ մորթի գոյնի պատճառով, խախտումն է մարդոց հաւասարութեան եւ եղբայրակցութեան բարոյական սկզբունքներուն, եւ հետեւաբար՝ անբարոյականութիւն է:



Եւ հասարակութեան հանդէպ ամէն անտարբերութիւն եւ անոր նկատմամբ ամէն ոչ յանձնառու կամ անպատասխանատու կեցուածք, ընթացք կամ արարք՝ անբարոյութիւն է եւ անիրաւութիւն: Մէկ խօսքով՝ անարդարը միաժամանակ, անիրաւ է եւ անբարոյ:

•••

Վերի մտորումները տուն տուին, գրասէր բարեկամիս՝ Կարօ Աբրահամեանի, ինծի ազնուաբար փոխանցած երեք համարները՝ Վատիկանի "OSSERVATORE ROMANO" պաշտօնաթերթին անգլերէն եւ ֆրանսերէն շաբաթական յաւելուածները (21 Ապրիլ եւ 22 Յուլիս 2016, եւ 6 Յոկտեմբեր 2017 թուակիր), որոնց մէջէն հայ ընթերցողին ուշադրութեան ու մտորումին կը յանձնեմ հետեւեալները:

16 Ապրիլ 2016 թուականին, յունական Լեսպոս (Lesbos) կղզիին մէջ, Մարիա անունը կրող փախստականներու գաղթակայանին մէջ, հանդիպում մը ունեցած են Ֆրանչիսկո Պապը, Բարթողիմէոս Ա. Պատրիարքը եւ Աթենքի ու համայն Յունաստանի Արք. Յերոնիմոս Բ., եւ՝ «Մարդկայնութեան ճգնաժամ» խորագրով, «Միացեալ Յայտարարութիւն» մը ստորագրած են, եւ՝ ելոյթներ ունեցած են փախստականներուն առջեւ:

«Միացեալ Յայտարարութիւն»ը կը խտացնենք ստորեւ.

«Մենք՝ Ֆրանչիսկո Պապ, Պատրիարք Բարթողիմէոս Ա. Եւ Արքեպիսկոպոս Յերոնիմոս Բ., յունական Լեսպոս կղզիին մէջ իրարու հանդիպեցանք՝ արտայայտելու համար մեր խորին մտահոգութիւնը ի տես՝ այն ողբերգական վիճակին, որուն մէջ կը գտնուին մեծ թիւով փախստականներ, արտագաղթողներ եւ ապաստան խնդրողներ, որոնք եկած են Եւրոպա, փախչելով պատերազմական իրավիճակներէն, եւ շատերուն համար ալ՝ իրենց կեանքին սպառնացող պայմաններէն: Համաշխարհային կարծիքը չի կրնար անտարբեր մնալ հանդէպ մարդկայնութեան այն հսկայական ճգնաժամին, որ ստեղծուած է բռնութեան եւ զինեալ մարտերու ծաւալումին, հալածանքներուն եւ կրօնական ու ազգային փոքրամասնութիւններու զանգուածային տեղահանութեան հետեւանքով, երբ կ'արմատախլուին ընտանիքներ իրենց տուններէն, բռնաբարելով անոնց մարդկային արժանապատուութիւնը, անոնց մարդկային հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները:

«Միասնաբար, պաշտօնապէս կը պահանջենք՝ Միջին Արեւելքի մէջ պատերազմին ու բռնութեանց դադրեցումը, արդար եւ մնայուն խաղաղութեան հաստատումը հոն, եւ՝ այս մարդոց պատուաբեր ձեւով վերադարձը իրենց տունները, զորս ստիպողականօրէն լքած էին անոնք:

«Եւրոպան այսօր կը դիմագրաւէ իր ամենալուրջ ճգնաժամը մարդկայնութեան՝ Բ. Աշխարհամարտի աւարտէն ասդին: Այս ծանրակշիռ մարտահրաւերին՝ մարդասիրութեամբ պատասխանելը բոլոր ազնիւ եւ առաքինի մարդոց, կազմակերպութիւններուն եւ մեծ պետութիւններուն մարդկային տարրական պարտքն է:

«Մենք հաստատապէս յանձնառու ենք Տէր Յիսուսի կամքին գործադրութեան, օգնելու կարօտեալներուն, եւ գործելու՝ խաղաղութեան, ընկերային արդարութեան եւ մարդոց ու ժողովուրդներու միջեւ հաշտութեան համար»:



Եւ այս «Միացեալ Յայտարարութիւն»ը՝ միաժամանակ կ'արտայայտէ հաշտութիւնը Կաթողիկէ եւ Յոյն-Ուղղափառ եկեղեցիներուն միջեւ:

Յաջորդ բոլոր մէջբերումները՝ խօսքերն են Ֆրանչիսկոս Պապին, տարբեր առիթներով, որոնք հրատարակուած են պաշտօնաթերթին երեք համարներուն մէջ:

«Պետութիւններու պատասխանատուներուն թելադրեցի երկու բան՝ ջնջել մահապատիժը իրենց պատժական օրէնքներէն, եւ՝ ընդհանուր ներում ներում շնորհել ամենէն աղքատ երկիրներուն, ջնջելով անոնց միջազգային մեծագումար պարտքերը» («Արդարութիւն եւ Խաղաղութիւն» նշանաբանով գումարուած Հայրապետական Խորհրդածողովին մէջ):

«Գանատայի մէջ օրինականացուած euthanasia-ն ապօրինի իրաւական ակտ մըն է, հասարակութեան հանդէպ պատասխանատուութենէ փախուստ մը, եւ մարդկային կեանքի նկատմամբ անբարոյ անտարբերութիւն մը, որուն կ'ընդդիմանայ Յիսուսի եկեղեցին, եւ պարտք կը զգայ աջակցելու այն ընտանիքներուն, որոնք հոգատար են իրենց ծերերուն եւ խեղանդամ աղքիկներուն եւ մանչերուն: Euthanasia-ն անձնասպանական արարք է, որ մեղանշում մըն է»:

Այս անտարբերութիւնը հասարակութեան եւ մարդկային կեանքին հանդէպ՝ անբարոյ փախուստ մըն է պատասխանատուութենէ, ինչպէս՝ պատերազմը եւ մարդու շահագործումը: Անտարբերութիւնը՝ կրաւորական է, ձեռնպահութեամբ, պատերազմը՝ ոճրային ու վայրագ, իսկ շահագործումը՝ յարձակողական ու բիրտ շահադիտական, եւ այս երեք տեսակի անտարբերութիւնները կը վտանգեն հանրային անդորրն ու ընկերային արդարութիւնը, խախտելով հասարակութեան խաղաղութիւնը եւ համերաշխութիւնը: Եւ ուրեմն, Ֆրանչիսկոս իրաւացիօրէն կը պատգամէ. «Մարդոց միջեւ համերաշխութիւնը երբեք մի՛ զոհէք նիւթական շահի տրամաբանութեան»: Իսկ մեծատաղանդ Պարոյր Սեւակ կը պատգամէ. «Մարդու հանդէպ՝ մարդ եղէք մարդիկ»...:

«Քրիստոնէաներ ըլլալով, գիտենք թէ՛ կրնանք յաղթահարել հակամարտութիւններն ու պատերազմները անհատներու եւ ժողովուրդներու միջեւ, միայն այն պարագային, երբ մենք մեր նմանները նկատի առնենք իբր մեր եղբայրներն ու քոյրերը, միջազգային համայնքը նկատի ունենալով որպէս ազգերու մէկ ընտանիք»:

Նոյն այս գաղափարը գովերգած եւ ցանկացած է Վահան Թէքէեան, իր «Երբ Օրը Գայ» միանախադասութիւն քերթուածին մէջ. «Բոլոր ազգերն իրարու զօդող սիրոյ կապին վրայ՝ կազմէ Մէկ Ընտանիք՝ մէկ աշխարհին այս վերեւ»):

«Մարդոց միջեւ համերաշխութեան բարոյական սկզբունքը երբեք մի՛ զոհէք նիւթական անձնական շահի տրամաբանութեան...», որովհետեւ՝ կը բացատրէ, բարոյական սկզբունքը մարդ ըլլալն է, ոչ՝ դրամ ունենալը: Այս գաղափարը լայնօրէն պարզաբանած է Նախապէս, գերմանացի հոգեվերլուծաբան Էրիք Ֆրոմմ (Eric Fromm), իր "Avoir Ou` Être" վերնագրով հատորին մէջ:

Ֆրանչիսկոսի յեղաշրջական պատգամներէն է, Սբ. Գիրքի համարներուն այսօրուան լեզուով այժմեական մեկնաբանութիւն տալը, նկատի ունենալով անոնց հնադարեան լեզուով գրուած ըլլալը եւ ներկայի հիմնովին նոր պայմանները: Ան կ'ըսէ. «Պիպիական լեզուն երկու-երեք հազար տարուան հնութիւն ունի, մեծապէս տարբեր ներկայի լեզուէն, եւ՝ ներկայի հասարակութեան կենցաղային պայմանները մեծապէս տարբեր են հինէն: Հետեւաբար,





երբ հոգեւորականը՝ իր քարոզին մէջ, համարները տառացիօրէն կրկնէ, անոնց միայն ծանուցումը կատարած կ'ըլլայ, իսկ անելի կարեւորը՝ անոնց բացատրութիւնն է, նոր պայմաններու լոյսին տակ եւ ներկայի լեզուով ու այժմեական մեկնաբանութեամբ, պահպանելով անոնց հիմնական միտքը, առանց մանրամասնութիւններուն: Համարները պարզապէս ծանուցանելը՝ հրեշտակ ըլլալ է, անոնց բացատրութեան համար դասախօսելը՝ բժիշկ»:

Այլ առիթով մը, բացատրելու եւ մեկնաբանելու այս յեղաշրջական սկզբունքը կը կիրարկէ ըսելով. «Հայր Մեր» աղօթքին մէջ շատ լուրջ սխալ մըն է – եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն – նախադասութիւնը, որովհետեւ՝ Աստուած չ'է որ մեզ կը տանի փորձութեան: Ուրեմն, հարկ է սրբագրել եւ ըսել. «Եւ օգնէ մեզի՝ որ չ'երթանք փորձութեան»:

Սուրբ գրային բնագրերը մեկնաբանելու ազատութիւնը պահանջեց նաեւ իսլամ կրօնի աստուածաբան, եգիպտացի Նասր Համետ Ապու Չէյտը՝ միեւնոյն պատճառաբանութիւններով, սակայն Ալ-Ազհարը (Իսլամի Վատիկանը) բնադրեց զինք եւ Նոյնիսկ պետութեան ստիպեց որ Ապու Չէյտը զրկէ եգիպտական քաղաքացիութենէն եւ լուծեալ հռչակեց անոր ամուսնութիւնը իր իսլամ կնոջ հետ...: Նասր Համետ Ապու Չէյտ (1943-2010) կողմակից էր Քուրանի բնագրին քննադատական ընթերցումին, քայլ պահելու համար մարդկութեան քաղաքակրթական երթին հետ: Մեր մէջ՝ Թնտրակեցիները եղան առաջին, եւ դժբախտաբար ալ վերջին, քննադատական ընթերցողները Աւետարանին...:

Ֆրանչիսկոս կողմակից է նաեւ՝ եկեղեցւոյ կանոններու սրբագրումին: Երբ "Wall Street Journal"ի թղթակից Francis Rocca հարց տուած է, թե՛ վերամուսնացած ամուսնալուծեալ կին մը ինչու չի կրնար պատարագի ներկայ գտնուիլ ու հաղորդուի, Պապը պատասխանած է. «Ես սուրբ Մարգարէ մը չեմ, սակայն, ներկայի պայմանները նկատի ունենալով, համոզուած եմ եւ կ'ուզեմ ըսել, թե՛ այդ կինը իրաւունք ունի այսօր, երբ ամբողջ աշխարհի մէջ կը տիրէ ընտանիքի ճգնաժամ մը: Ընտանիքը հասարակութեան հիմքն է, բայց այսօր երիտասարդները կամ չեն ուզեր, եւ կամ ալ նիւթական միջոցներ չունին ընտանիք կազմելու, գլխաւորաբար գործազրկութեան պատճառով, եւ անոնց հայրերն ու մայրերը ստիպուած կ'ըլլան երկրորդ գործ մըն ալ աշխատելու, հասնելու համար սղութեան աճին ետեւէն, անարդար հասարակարգերուն պատճառով, եւ՝ ծնելիութիւնն ալ մեծապէս նուազած է, ա՛յս եւ այլ պատճառներով: Ուրեմն, այսօր Եւրոպան կը գտնուի լալիք վիճակի մը մէջ...»:

W Radio Columbia-ի թղթակից Néstor Ponguta, երբ կը հարցնէ Լեսպոս կղզիի գաղթականներն Պապին տպաւորութիւնը, պահ մը լռութենէ ետք, ան կ'ըսէ. «Խորին ցաւ եւ յուզախոռով: Չեմ ուզեր պետութիւններ ամբաստանել, միայն՝ Նոյնութեամբ կը կրկնեմ այն խօսքերը, զորս Մայր Թերեզան տուած էր Նոյն հարցումին, Նոյն պատասխանատուներուն դէմ, թե՛ պատերազմի հրձիգները այնքան ջանքեր կը թափեն՝ օգնելու համար փախստականներուն... որպէսզի՝ մեռնին ծովին մէջ... մինչ ծովը շատ մեծ է...»:

"Messagero"ի թղթակից Francia Giansoldati, երբ դժգոհելով կը հարցնէ, թե՛ Պապը՝ Լեսպոսէն վերադարձին, ինչու միայն իսլամ փախստականներու ընտանիքներ բերած է իր հետ, անոնց տալով նախապատուութիւնը, փոխանակ նախապատուութիւնը քրիստոնէաներուն տալու, Պապը կ'ըսէ. «Եկեղեցիին համար բոլոր մարդերը հաւասար նախապատուութիւն ունին Աստուծոյ մօտ, որ խտրականութիւն չի դներ ոչ մարդոց եւ ոչ ալ ժողովուրդներու միջեւ...»: Իր այս պատասխանով Պապը ապտակ մը կու տայ ոչ միայն քրիստոնէայ, այլեւ՝ սինական



ցեղապաշտներուն, որոնց առասպելներէն մէկն ալ «Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ»ի առասպելն է:

"Le Figaro" օրաթերթի թղթակից Jean-Marie Guénois կրկնած է Նոյն հարցումը, տարբեր դարձուածքով, եւ Պապը իսկոյն շեշտելով պատասխանած է. «Ես ըսի արդէն, թէ Աստուած խտրութիւն չի դնել իր արարածներուն միջեւ՝ ոչ դրական եւ ոչ ալ բացասական առումով: Աստուած ստեղծած է ամբողջ մարդկութիւնը որպէսզի ընտանիք մը ըլլայ (pour qu'elle soit une famille)»:

Յոս կ'արժէ յիշել, թէ Չօր. Անդրանիկ, 1913-ին, Պալքանեան պատերազմի օրերուն, համաձայն ԼԵՕՆ Թրոցքիի, ըսած է . «Ես ազգայնամոլ մը չեմ, ես միայն մէկ ազգութիւն կը ճանչնամ, ատիկա՝ բոլոր ճնշուած ժողովուրդներու ազգութիւնն է» (տես՝ Լ. Troçki, "Balkan Savaşları, Arbu Yayınları", İstanbul, 1995, 285-287): Չօր. Անդրանիկի արտայայտած այս միջազգայնական ոգին, գործնականացումն է ժողովուրդներու բարոյական սկզբունքին:

ԱՖՔ-ի թղթակից Fanny Carrier հարց կու տայ, թէ՛ ինչու Պապը չի զանազաներ փախստականներուն փախուստի պատճառները իրարմէ: Ան կը պատասխանէ. «Իրենց երկրէն փախստականները, պարզ է թէ իբր պատճառ ունին, կամ անօթի մնալու վտանգ, եւ կամ ալ՝ մեռնելու: Այլ խօսքով՝ շահագործումն ու պատերազմը»: Հայաստանէն փախստականներուն (արտագաղթողներուն) պատճառն ալ հոն տիրապետող վայրի դրամատիրական համակարգի օլիգարխներն են Հայաստանի հայաթափումին պատասխանատուները, շարունակելով փանթօրքերու Արեւմտահայաստանի հայաթափումը՝ Արեւելահայաստանի մէջ:

Այլ խօսքով, Հայաստան այսօր կը գտնուի վայրենացման հանգրուանին մէջ, իր վայրի դրամատիրական համակարգին պատճառով: Ո՞րն է ճանապարհը՝ դուրս գալու եւ անդրանցնելու այս հանգրուանը: Ալպերթ Այնշթայն կ'ըսէ. «Սոցիալիզմի իրական նպատակն է՝ մարդկութեան զարգացման երթին մէջ, զլեւ-անցնիլ վայրենացման հանգրուանը»:

Մարդասիրութիւնը, համերաշխութիւնը, երկխօսութիւնը, իրեր-օգնութիւնը եւ մարդոց ու ժողովուրդներու եղբայրակցութիւնը՝ հիմքերն են ՄԱՐԴ ԸԼԼԱԼՈՒԲԻ եւ մնալու քաղաքակրթական հանգրուանի բարոյագիտութեան: Իսկ վայրենացման հանգրուանի «բարոյագիտութեան» սկզբունքներն են՝ ԴՐԱՄ ՈՒՆԵՆԱԼԸ, շահագործումը, «մարդը մարդուն գայլ» համարելը, բռնանալը, անարդարութիւնը եւ պատերազմները: Եւ Զ. Մարքս կ'ըսէ. «Մարդկութիւնը պարտաւորուած է ընտրութիւն կատարել՝ դրամատիրութեան բարբարոսութեան եւ սոցիալիզմի քաղաքակրթութեան միջեւ...»: Այլ խօսքով՝ անմարդկայնական հակաբարոյականութեան եւ մարդկայնական բարոյականութեան միջեւ:

Երբ միաժամանակ իմաստասեր, իրաւագետ ու բարոյագետ Յելվեթիոսի պնդումը յիշենք, թէ՛ բարոյագիտութիւն մը, որ հիմնուած չէ իրաւագիտութեան վրայ՝ անբարոյական է, կը տեսնենք որ այս պնդումը կը պատշաճի նաեւ՝ Միջնադարու Վատիկանի դաւանած աւատապետական, դպրական (սքոլասթիկ) ու ստրկատիրական աստուածաբանութեան բարոյագիտութեան:

Երբ՝ «Սուրբ» Թովմաս Աքվինացին, իր "Summa Theologica" գիրքին հարցում 57-րդի 3-րդ համարին մէջ գրած է. «Ստրկութիւնը՝ մարդոց մէջ, բնական երեւոյթ է...»:



Երբ՝ «Սուրբ» Օգոստինոս, իր «Աստուծոյ Քաղաքը» խորագրեալ նշանաւոր երկին Գիրք 19-րդի Գլուխ 15-րդին մէջ գրած է. «Ստրկութիւնը՝ Բարձրեային սահմանած պատիժն է՝ մարդոց սկզբնական մեղքին համար»: (Սկզբնական մեղք կոչուած այս հակաբարոյական ու հակամարդկային առասպելը՝ դարեր առաջ, մերժուած էր Հայ Թոնտրակեան շարժումէն, ըսելով թէ՛ մարդ իր ծնած պահին չի կրնար մեղք գործել: Այս յաւելումով՝ մարդը ծնած պահուն արդէն դատապարտուած է, Աստուած չընդունիր ասիկա: Ասիկա մարդը իր ծնած վայրկեանին ստրկացնել կը նշանակէ: Իսկ Ֆրանց Բաֆքա, իր «Դատավարութիւնը» ("The Trial") փիւսին մէջ կը նկարագրէ դատապարտուող մարդ մը, որ սակայն չի գիտեր թէ ինչո՞ւ համար կը դատապարտուի...: Դրամատիրութիւնն ալ կը շահագործէ աշխատաւորները՝ իրենց գործած սկզբնական մեղքին՝ն համար...):

Եւ երբ՝ Նոյնիսկ 1931 թուին, դրամատիրութեան դարաշրջանին, "Quadragesimo Anno" խորագրեալ պապական կոնդակին մէջ գրուած է. «Աշխատաւորները՝ առանց սրդողելու, պարտին ընդունիլ Սրբազան Նախախնամութեան կողմէ իրենց համար որոշուած տեղն ու դիրքը ընկերութեան մէջ...»: Աւատապետական, եւ հուսկ՝ դրամատիրական դասակարգերուն հետ Նոյնացած, Վատիկանի այս ստրկական, դպրական աստուածաբանութեան բարոյագիտութիւնը անբարոյական է, քանի որ հիմնուած չէ արդարութիւնը դաւանող իրաւագիտութեան վրայ, որ կը մերժէ շահագործումը:

Այս դպրական, ստրկատիրական աստուածաբանութեան դէմ՝ 20-րդ դարու 60-ականներուն, Լատին Ամերիկայի Կաթոլիկ յեղափոխական աստուածաբանները առաջարկեցին «Ազատագրական Աստուածաբանութիւն»ը, որուն հետեւորդ արքեպիսկոպոսներէն մին էր Ֆրանչիսկոս Պապը՝ Պուէնոս Այրեսի Խորիւէ Մարիո Պերկոլիօ Արքեպիսկոպոսը: (Յեղափոխական եւ Մարքսիզմն ու Սոցիալիզմը դաւանող հոգեւորականներու գոյութեան նկատմամբ տարակոյս ունեցողներուն կը յիշեցնենք Ալի Շարիա՛աթիի (1933-1977), այսինքն՝ Շի՛ի Ազատագրական աստուածաբանութեան տեսաբանին պարագան, որ 44 տարեկանին Նահատակուեցաւ Իրանի Շահին գաղտնի սպասարկութեան՝ Սաւաքի ձեռամբ՝ 1977-ին: Հօր՝ Մուհամմետ Շարիա՛աթիի հիմնած «Շի՛ի Աստուածապաշտ Սոցիալիստական Շարժում»էն վերջ, Ալի հիմնեց «Սուճահետի Խալք Իրան» յեղափոխական-կրօնական շարժումը, որ կը դաւանի թէ՛ մարդ երբ ծանօթ չէ մարքսական ուսմունքին, չի կրնար ճիշդ կերպով հասկնալ պատմութիւնն ու հասարակութիւնը, եւ՝ մարդկութեան պատմութիւնը դասակարգային պայքարի պատմութիւնն է՝ Աբելի եւ Կայէնի միջեւ: Թէ՛ Շի՛ականութիւնը տակաւին վերածուած չէ աֆիոնի, բայց կան՝ «Կարմիր Շի՛իներ» եւ «Սեւ Շի՛իներ»...):

Վատիկան, այս նոր աստուածաբանութիւնը հակակշռելու յոյսով, այդ աստե՛ն գումարեց Վատիկան 1 եւ Վատիկան 2 խորհրդաժողովները, եւ՝ Յովհաննէս Ի2. Պապը հրապարակեց "Pacem in Terris" կոնդակը, իսկ Պողոս 2. Պապը՝ "Aggiornamento" կոնդակը: Առաջինը կը շեշտէր կարիքը աշխարհի խաղաղութեան, իսկ երկրորդը՝ եկեղեցին այժմեականացնելու անհրաժեշտութիւնը, առանց բարենորոգելու դպրական աստուածաբանութիւնը, զոր այսօր սկսած է կատարել Ֆրանչիսկոս Պապը՝ դանդաղ ու երկարաշունչ աշխատանքով, առանց կամայական շտապողականութեան... Նկատի ունենալով, որ դպրական աստուածաբանութեան տոկմաները շատ քարացած են երկար դարերու ընթացքին, եւ՝ խորապէս արմատակալած՝ հաւատացեալներու միտքին մէջ, իսկ ազատագրական բարենորոգումները ունին յեղաշրջական բնոյթ, եւ կրնան յառաջացնել կատարի եւ արիւնայի հակամարտութիւններ, ինչպէս տեղի ունեցան 16-17-րդ դարերուն, Մարթին Լուտերի կողմէ դպրական տոկմաներուն դէմ արտայայտուած Բողոքականութեան (1517)



պատճառով եւ յանգեցան կաթոլիկ-բողոքական արիւնալի «Երեսնամեայ Պատերազմին» (1618-1648), որուն տեւողութեան, Աստուծոյ անունով, գործուեցան խենեշային ոճիրներ՝ փոխադարձաբար...: (Ի դէպ, Լիբանանի քաղաքացիական պատերազմին մէջ ալ խաչակիր քրիստոնեայ զինեալները գործեցին՝ Աստուծոյ անունով, քստմնելի բարբարոսային ոճիրներ: Իսկ Սուրիոյ մէջ, մահիկակիր հրեշներ՝ Մուհամմետի անունով գործեցին խենեշ ու մարդակեր ոճիրներ...):

Եզրակացնելով, ըսենք թէ՛ բարոյականութեան մայր նախապայմանն է հասարակութեան հանդէպ պատասխանատու զգալն ու պատասխանատուութեամբ գործելը: Ասիկա անհատ մարդուն պարտքն է, պարտականութիւնը հասարակութեան հանդէպ:

Մեծանուն հայ իմաստասեր, մանկավարժ եւ բարոյագետ Ռեթեոս Յ. Պերպերեան գրած է. «Պարտքն է բարոյական օրէնքը՝ «պարտուց հրամայականը»: Պարտքին հնազանդիլը գործել է՝ իբրեւ բանաւոր եւ ազատակամ էակ, իբրեւ անձ, որուն տարերքն են բանականութիւն եւ ազատութիւն, եւ որուն պայմանն է՝ հնազանդիլ ազատօրէն բարոյական օրինաց: Մարդ անձ մը կ'ըլլայ, երբ գործէ հնազանդելով բանականութեան, եւ՝ ազատութեամբ հնազանդելով պարտքին, բարոյական գործ մը ըրած կ'ըլլայ, մարդ եղած կ'ըլլայ՝ *este homo...*»: Ուրեմն, կենդանի մը չմնալու եւ անձ ու մարդ դառնալու համար, ան պէտք է իր ազատ կամքով եւ իր որոշումով, ո՛չ պարտադրութեամբ, հնազանդի հասարակութեան հանդէպ «պարտուց հրամայականին»:

Պէյրուժ, 11 Փետրուար 2018

## Տեսակէտ

### Ազգային սլացք

## ԳԻՐՔ ՊԱՏՐԱՍՏԵԼ, ՀՐԱՏԱՐԱԿԵԼ, ՄԱԿԱԳՐԵԼ, ԱՌԱՔԵԼ, ՑՐՈՒԵԼ ԵՒ... ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

### Գրեց՝ ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Գիրքը գոյութեան գրաւական է

Գիրքը պատմութեան հայելի է

Գիրքը գիտութեան աղբիւր է

Գիրքը հզօրութեան ամրոց է

Գիրքը ինքնութեան արտայայտիչ է

Եթէ այս թոււմները կամ հաստատումները ընդհանրական են ժողովուրդներու պատմութեան մէջ, ապա, ի՞նչ կրնան ըլլալ հայ ժողովուրդին համար, որ դարաւոր անցեալ ու շփում ունեցած է հայ գիրքին հետ, այն գիրքին, որ իրեն համար եղած է՝

- Ազգային կառչածութեան դարբնոց
- Հայրենասիրական ոգիի զարթօնք
- Պատմամշակութային հաւատամքի ներշնչարան
- Ընթերցասիրական աշխարհի լուսարան
- Հայերէնագիտական իրազեկութեան շտեմարան:

Առանց սահմանափակուելու վերոյիշեալներուն մէջ, այո՛, հայ գիրքը՝ իր հրատարակութեամբ, բովանդակութեամբ, գիտելիքութեամբ ու նիւթակազմութեամբ, անփոխարինելի եւ անկրկնելի ակունք մըն է, որ մի՛շտ հայ ժողովուրդի «գրահն ու վահան»-ը դարձած է, նոյնիսկ այն դժնդակ ու դժխեմ ժամանակաշրջաններուն, երբ սուրն ու թալանը, թուրն ու ջարդը, զինք կը հալածէին, կը ճնշէին, կը ստրկացնէին ու կը պղծէին: Հայ գիրքը դարձաւ փրկութեան ու օրհնութեան անընկոմելի լաստ մը, որ հակառակ իր փոքրութեան եւ ածութեան, ի վիճակի եղաւ հայ ժողովուրդը պահել-պահպանել, սրբապատել-սրբացնել, կենդանաւորել-կենդանացնել:

...

Հայ գիրքը եղաւ հայ ժողովուրդին անբաժան էամասնիկը, անխզելի յենարանը, անկոտորելի բազուկը եւ աննկուն խարիսխը, որ իրեն տուաւ շունչ ու կեանք, ոգի ու սլացք, ինքնավերանորոգուելու եւ ինքնակողմորոշուելու գնով: Պատահական չէ, որ գրքասիրութիւնը, գրքապաշտութիւնը եւ գրքամեծարութիւնը հայ ժողովուրդին համար



դարձան անխախտ լծակներ, սակայն, միշտ ամրագրուած եւ ամրապնդուած ազգային դրոշմով, ազգային ինքնութեամբ եւ ազգային եութեամբ: Եթէ պիտի մասնաւորեն որոշակի պարագաներ, ատոնց մէջ «ամիւծի բաժին» կը գրաւեն Պոլիսն ու Խորհրդային Չայաստանը, առաջինը՝ իր բազմասեռ, բազմաշերտ, բազմագոյն ու բազմահարուստ հրատարակութիւններով, իսկ երկրորդը՝ իր մասնագիտական, բանասիրական, ակադեմական ու գիտահետազօտական գործերով, որոնք «անսպառ» գրագանձարաններ են, գրածախներ ու գրապահեստանոցներ: Բարեբախտաբար, այս գրքասիրութիւնը կամ գրքապաշտութիւնը, գրողի եւ ընթերցողի ջերմ համեմատութիւններով, ժառանգութեան եւ իրագործութեան Սփիւռքի զանազան գաղթածախներու մէջ, որոնց նախակարապետները հանդիսացան ՅԱԼԷՊ-ն ու ՊԷՅՐՈՒԹ-ը, որոնք դարձան հայ գիրքի հրատարակութեան հնոցներ, գրիչի հզօրութիւններով, ստեղծագործութիւններու որակով, գրասեռերու առատութեամբ եւ, ամենէն կարեւորը, ընթերցողներու գիտակից ընտրանքով ու հայ գիրքը զնահատողի զանգուածով: Անշուշտ, տուեալ ժամանակաշրջաններու պայմանները շատ ակեյիով թոյլատու էին, որ հայ գիրքը իր տեղը գտնէ, իր արժէքը ունենայ, մանաւանդ երբ՝ գրողներու ակեյի մեծ փաղանգ կար, իսկ արհեստագիտութիւնը տակաւին այնքան «ակեր ու աղէտ» չէր գործած, որքան այս օրերուն, ուր «ռոպոթ»-ային մտայնութիւնը, գործիքութիւնը ու բռնագրօսիկութիւնը «գերիշխած» են ամենուրեք: Լիբանանահայութեան պարագային, ի հեճուկս գրողներու եւ ընթերցողներու թիւի զգալի նուազումին, բարեբախտաբար, տակաւին կան «խենթեր», որոնք գիրք կը գրեն, կը պատրաստեն, կը հրատարակեն, որովհետեւ կը հաւատան հայ գիրքի լոյս ընծայման՝ – Անհրաժեշտութեան – Օգտակարութեան – Լիարժէքութեան – Կենսականութեան – Անսասանութեան Վերջին հաշուով, եթէ հայ ժողովուրդը կը հզօրանայ իր գրքասիրութեամբ ու գրքահրատարակութեամբ, որոնք իրեն համար եղած են օրինակելիութեան ու բարեմասնութեան ոսկեայ չափանիշեր, ապա, ինչպէ՞ս կարելի է բացատրել եւ ինչո՞վ արդարացնել հայ գիրքի նկատմամբ եղած աններելի վերաբերումները եւ գործուած անընդունելի անտեսումները: Այս հրատապ հարցերուն մասին երբ կը խօսուի կամ արտայայտութիւններ կը լսուին, շատեր մատնացոյց կ'ընեն Չայաստանի օրինակը, ուր ընթերցողներու թիւի անկում կայ (անշուշտ, համեմատած Բ. Չանրապետութեան շրջանին), իսկ գրողներու գիրքերու հրատարակութեան տպաքանակը, ակեյի քան սահմանափակուած է (դարձեալ՝ համեմատած խորհրդային կարգերու տարիներուն): Անտարակոյս, ճիշդ է ակնարկութիւնը կամ դիտողութիւնը, որովհետեւ ոչ մէկ չքմեղանք պետք է փնտռել հոն, այնքան ատեն որ խօսքը կը վերաբերի հայրենի իրականութեան ու մտաւորականութեան, որոնք կը սնուին Չայաստանի մէջ, կ'աճին ու կը հասունանան, ի շարս այլ երեւոյթներու ու շարժերու, բայց, ամենէն ակեյի ներշնչուելով հայրենի հողէն ու կանչէն: Անշուշտ, մեր նիւթը հայրենական այս թղթածրարը քննարկել չէ, այլ՝ սփիւռքահայ ու մասնաւորաբար լիբանանահայ հեղինակներու գրքահրատարակութեան հիմնախնդիրին վրայ ակնարկ մը նետել է, որ վստահաբար, կը մտահոգէ ու կը տագնապեցնէ անոնցմէ իւրաքանչիւրը: Ինչպէս ազգային մեր բազմագոյն հարցերուն, մեղմ ըսած, անմխիթարութիւնը, ընթերցողներու տակաւ սակաւութիւնն ու շոգիացումը, կարելի չէ միայն «նետել» լոկ աշակերտին եւ երիտասարդութեան վրայ, քանի ատիկա կը պահանջէ լուրջ, առարկայական եւ իրապաշտ մօտեցում, որ պարտականութիւնը պետք է դառնայ մասնագիտական վերլուծումներու ու քննարկումներու, մանկավարժներէ, ընկերաբաններէ, հոգեբաններէ ու փորձագետներէ բաղկացած խմբակներու կողմէ: Սակայն, հայ գիրքի հրատարակութեան գործընթացը, որքան ալ կապուած ըլլայ ընթերցողին հետ, գրողներուն համար բոլորովին այլ հոլովոյթի մը հետ առընչութիւն ունի (բանաստեղծ, արձակագիր,



պատմագիր, հրապարակագիր, լեզուագետ, յուշագրագետ, եւ այլք)։ Յաճախ հարցում կ'ուղղուի հեղինակներու (եւ կամ՝ հասարակութեան մէջ զարմանք կայ), թէ ինչո՞ւ կը գրուին կամ կը հրատարակուին գիրքեր, ո՞վ կը կարդայ զանոնք...։ Թերեւս իրաւացի(“) են այս հարցադրումները կամ հարցադրողները։ Չեմ գիտեր, թէ իւրաքանչիւր հեղինակ ինչպէ՞ս կը պատասխանէ անոնց, բայց, գոնէ ես, կ'ըսեմ.

- Գիրք կը հրատարակեմ, որովհետեւ ինքզինքս կոչումի մարդ կը նկատեմ, հետեւաբար, այդ առաքելութեան կրողը եւ նուիրագործողն եմ։ Հաւատացած եմ, որ տակաւին ընթերցողներու յարգելի շրջանակ մը կայ, բայց, ամենէն ակելի, ես հոգեկան ու բարոյական մտաւորականի ինքնագոհունակութիւնը կը վերապրիմ, քանզի՝ աշակերտեցինք, դաստիարակուեցանք ու զինուեցանք հայ գիրքի հրայրքով ու հմայքով, որ եղաւ հայկականութեան հրավառ դպրոց մը։ Այսօր, սակայն, արդէն իսկ հազուագետ-ացող գրողներու համար, ամենէն դաժանագին ու տառապագին աշխատանքներն են.

- Մեկեւասներ կամ բարերարներ գտնելը, որովհետեւ՝ շնորհաւորելի քիչերն են, որոնք յանձն կ'առնեն գիրքերու հրատարակութիւնը։

- Տրուումը «բեռնակրութեան» համագոր (եւ ակելի) ծանրակշիռ պարտաւորութիւն-հեւք մըն է, որ կ'իյնայ հեղինակին վտիտ ուսերուն։

- Արտասահման առաքումի ծախսը կատարեալ սնանկացումի առաջնորդող արկածախնդրութիւն մըն է։

- «Մակագրութիւն»-ը ուրիշ պարտադրանք մըն է, որուն կը մղուի հեղինակը կամ... կը պահանջուի անկէ։

- Հայաստան ուղարկումը պարզապէս «անկարելիութիւն» մըն է։ Եթէ ճամբորդ է՝ կը մերժէ (թերեւս՝ բացի մէկ-երկու գիրքէ)։ Եթէ հեղինակ է՝ ճամպրուկը միայն գիրքով կը լեցուի, իսկ հոն ալ «ցրուիչ»-ի լրացուցիչ դեր կը կատարէ (վերադարձին ալ՝ նոր գիրքերով ճամպրուկը ամբարելով)։ Այս խայտառակ վիճակի պատճառով, ոչ հայաստանցի մտաւորականը, ոչ ալ սփիւռքահայ, հաղորդակից կը դառնան զոյգ հատուածներու հրատարակութիւններուն։ Ի դէպ, օրին, պաշտօնական նամակով թէ այլապէս, այս տխուր կացութեան մասին տեղեկացուած են Հայաստանի դեսպանատունն ու հայրենի պատասխանատուներ։ Ո՛չ մէկ արձագանգ, լաւագոյն պարագային՝ «պիտոճէ չունենք»։ Հետաքրքրական է, ինչո՞ւ խորհրդրդային շրջանին գիրք կը ստացուէր, նաեւ՝ ամէն տեսակի գրականութիւն, իսկ հիմա «փող... չկայ»-ի խժալուր յանկերգ։ Սփիւռքի նախարարութիւնը ըսելիք կամ ընելիք ունի՞...։ Այս «թելեթոն»-ներէն կամ «ռատիօթոն»-ներէն հայ գիրքին ալ բաժին մը կարելի՞ է կազմակերպել։ Արձանագրենք նաեւ, որ որոշ հրատարակչական յանձնախումբեր ու շրջանակներ, մեկեւասի կարգով, գիրքի հրատարակութեանց գործնապէս սատարող են, ինչ որ, իրօք, գնահատելի է, այդուհանդերձ, անոնք ալ քննարկելիութեան ենթակայ ըլլալու են, որովհետեւ հոն ալ անհարթութիւններ կան...։ Յամենայն դէպս, հայ գրողը եւ մտաւորականը իրենց ինքնութեան տէրն են եւ պիտի շարունակեն գիրք պատրաստել, խմբագրել, հրատարակել, մակագրել եւ մե՛նծ... շնորհակալութիւն բոլորին, բայց, ԳԻՐՔ ՍՏԱՏՈՂՆԵՐԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ՞Ն, ԳԻՏԵ՞Ն ՅԱՅՏՆԵՒԸ, ՍԿՍԱԾ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ, ԱՆՁՆԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՄԵՍՏԸ...։

Պ.Յ.Ա.



Պէյրուէ,

Յունուար 2018



## Դիմաւորել 100-Ամեակը 4.

### Հայաստան(ներ)-Սփիւռք(ներ)

### Ներազգային Միասնութիւնը

## Յ. ՊԱԼԵԱՆ



Ինքնախաբեութիւն է խորհիլ, որ բոլոր հայերը նոյն ձեւով պիտի մտածեն, նոյն վերաբերումը պիտի ունենան դէպքերու եւ կացութիւններու դիմաց: Բայց ներազգային միասնութիւնը, որ վերաբերումներու քարացում չէ, պետք ունի անհատները եւ խմբաւորումները գերանցող արժէքներու եւ սկզբունքներու, որպէսզի կարծիքներու տարբերութիւնը հակամարտութեան չվերածուի, օր մըն ալ մենք մեզ չգտնենք քաղաքացիական պատերազմի, կամ այդպէս բաներու աղետին առջեւ:

Եղիշէի Վարդանանց պատմութիւնը, Ռաֆֆիի «Սամուէլ» պատմավէպը մեզ վարժեցուցած անմիաբանութիւն բառը լսելու: Աւելին ալ. հայ իշխանները դիմած են պարսից արքային, որ

գահընկէց ընէ հայոց թագաւորը:

Անմիաբանութեան դասական դարձած օրինակներ:

Անդրանիկ անկախ հանրապետութեան օրերուն, երբ երկիրը եւ ժողովուրդը ճակատագրական պահեր կ'ապրէին, հակապետական խռովութիւններ կ'ըլլային երկրին մէջ, հետազային, Հայաստանի

խորհրդայնացումէն ետք, երբ անմիաբան ըլլալու հնար չկար, ո՛չ միաբանութեան, ո՛չ ալ անմիաբանութեան մասին կարելի էր խօսիլ: Անմիաբանութեան կիրքը մղած է նաեւ ծայրայեղութիւններու. յիշել խորհրդայնացման յաջորդած շրջանի Երեւանի բանտի ոճիւրները:

Նաեւ հայրենահանուածներու սփիւռքը ինքնակամ, թելադրուած կամ փառասիրական անմիաբանութեամբ ապրեցաւ խորհրդային եօթանասուն տարիներուն, որուն պատճառով քարացած մտայնութիւններ եւ վերաբերումներ զարգացան: Հաւանօրէն սերունդ պետք է անցնի, որպէսզի կոշկոռ կապած սովորութիւններ եւ մտայնութիւններ անհետանան, փոխուին:

Վերանկախացած Հայաստանը դեռ չյաջողեցաւ անմիաբանութիւնը յաղթահարել: Այդ բացասականութեան սառցալեռան երեւցող մասը բուռ մը երկրին մէջ տասնեակներով կուսակցութիւններն են, յաճախ՝ անհատի մը կամքով եւ անոր շուրջ բոլորուած:

Բազմակուսակցական դրութիւնը սխալ չէ, ժողովրդավարութիւն է: Բայց քաղաքացին ինքնիրեն կրնայ հարց տալ, թէ Հայաստանի վերականգնումին եւ կացութեան բարելաւման



համար ինչպէ՛ս կարելի է գտնել քանի մը տասնեակ ծրագիրներ: Տեղ մը բան մը սխալ է, եւ կը տարուհիք խորհելու, որ կը գտնուինք անմիաբանութեան առջեւ:

Այդքան ալ հին չէ մօտիկ անցեալը, երբ ստորագրութիւն կը հաւաքուէր, որ Հայաստան զիջի իր անկախութիւնը եւ միանայ Ռուսիա-Պիեյուռուս համադաշնակցութեան:

Սփիւռքի պարագան եւս քննելի է: Աւանդական կոչուած կուսակցութիւնները, բացի անցեալի աւանդութիւն մը շարունակելու սովորութենէն, այսօր հանրութեան կրնա՛ն ներկայանալ եւ ըսել, թէ Հայաստանի եւ հայ ժողովուրդի ապագային համար ի՛նչ տարբեր պատկերացումներ ունին: Հակառակ անոր որ անցեալի անհանդուրժողութիւնները չկան, բայց չկայ նաեւ տարբերութիւնները բացատրելու եւ հասկնալու հնարը: Անմիաբանութիւնը կը շարունակուի՝ իւրաքանչիւրը իր ցանկապատի ետին, անցեալէն ժառանգուած քարացած տարբերութիւնները յաւերժացնելով:

Ինքզինք որպէս այդպիսին ջայտարարող անմիաբանութիւնը կը դարմանուի, եթէ փորձենք ազգային հեռանկար սահմանել, օրինակ, ըսել, թէ ինչպէ՛ս պիտի միացնենք ժողովուրդը եւ պիտի ամբողջացնենք հայրենիքը: Այս հարցումը այսօրուան եւ վաղուան համար ազգի հիմնական օրակարգ պէտք է ըլլայ: Հայաստան եւ սփիւռք-(ներ), կուսակցութիւններ եւ ղեկավարութիւններ, հանդէ՛ս կու գան այս զոյգ հարցերուն լուծման միտող առաջադրանքներով, որոնց

տարբերութիւններով հասկնալի կը դառնայ կուսակցութիւններու բազմազանութիւնը:

Աւելի պարզ. ի՛նչ կ'ըսեն տասնեակներով կուսակցութիւնները հողահաւաքի եւ ազգահաւաքի հարցով, որոնցմով միայն կրնայ երաշխաւորուիլ մեր ինքնուրոյն գոյութիւնը: Անոնք ի՛նչ կ'ըսեն նաեւ ընկերատնտեսական կազմակերպութեան հարցով: Չի բաւեր որպէս լուր հաղորդել չարաշահումները, այլ՝ ըսել նաեւ, թէ ինչպիսի՛ արդար համակարգ պիտի ստեղծուի, որպէսզի քաղաքացին իրապէս ինքզինք հարազատ զգայ ընկերութեան մէջ եւ հողին վրայ, ինչ որ իսկական պատուանդանն է միաբանութեան եւ համախոհութեան:

Մինչեւ այն ատեն որ վայրագ դրամատիրութեամբ կ'առաջնորդուինք, անոր յառաջացուցած անարդարութիւններով, օրէնքի խախտումներով, միասնութիւնը կ'ըլլայ դատարկաբանութիւն:

Հողահաւաքը յուզում յառաջացնելու համար կրկնուող կարգախօս չէ: Ան պատմական, մշակութային եւ տնտեսական այն ենթակառոյցն է, որ ինքնութիւն կը ճշդէ: Մեր ժողովուրդի անցած ուղին հողին վրայ է, նախահայրերու ոգեկանութիւն ներշնչող առասպելները հոն են, ո՛չ Ֆլորիտա, ո՛չ Կլենտէյ, Նոր Չելանտա: Հայը որպէս անհատ, հայերը որպէս ժողովուրդ, յարգելի ըլլալու եւ իրենց զիրենք յարգելի համարելու համար, հողահաւաքը պիտի ունենային, ունենան՝ որպէս քաղաքական-գաղափարական օրակարգ, առանց անձնատուր ըլլալու փերեզեկային գործնապաշտութիւններու, միշտ խորհելով, որ պատմութիւն եւ ժամանակներ սառած չեն:

Ազգահաւաքը կ'իմաստաւորէ հողահաւաքը, անոր լիցքն է: Հայրենիքի մը հողը սոսկ արտ չէ՝ աշխարհագրական շրջանի մը մէջ ձեռք բերուած մշակելի հող, վարձուած կամ գնուած: Հողատէր հայեր կան աշխարհի տարբեր երկիրներուն մէջ, բայց անոնց հողերու



գումարումով հայու հայրենիք չի ստեղծուի: Այդ տարածութիւններուն վրայ հայ ազգի տեւականացում չապահովուի: Ազգի զարգացումը եւ ինքնիրականացումը որպէս այդպիսին՝ կ'ըլլան նախահայրերու դրոշմը կրող հողի վրայ: Մուրակի ամենէն գեղեցիկ վայրերուն մէջ անգամ հայրենահանուած կամ ինքնահայրենահանուած հայը հիւր Է, այդպէս պիտի ըլլայ, մինչեւ որ դառնայ ծագումով հայ: Ինչպէ՛ս կարելի է խուսափիլ նման աղէտէ: Զարկ Է անստեղծութեթ բաժրածայնել եւ ըսել՝

հայրենադարձութեամբ, որ իսկական պատասխանն Է շարականի պէս կրկնուող հայապահպանման, կանխարգելիչ դարմանը՝ հայրենայքման:

Յայաստանի անդրանիկ հանրապետութեան պատմական արժէքի գնահատումը փակ սրահներու եւ բանիմաց մարդոց գիրքերուն մէջ պէտք չէ բանտարկել, այլ՝ զայն զետեղել ներկային եւ հասարակութեան մէջ, գծել ապագայի հեռանկար, գիտնալով, որ առանց հողահաւաքի եւ ազգահաւաքի մենք մեզ կը զրկենք տոկալու եւ տելելու հնարաւորութենէ: Այս գիտակցութիւնը արթնցնել, զայն հասցնել իւրաքանչիւրին, առանց բացառիկութեան նկատումներու, պարտականութիւնն Է ղեկավարութեան, որ իր վարքով, բարքով, հեղինակութեամբ, օրինակելիութեամբ, պիտի յառաջացնէ հայրենատիրական անխարդախ հակազբօսաշրջային յանձնառութիւն, Յայաստան-Արցախի իւրաքանչիւր թիզ հողին համար: Եթէ այսօր կեանքի չկոչուի այս յանձնառութիւնը, ինչպէ՛ս պիտի կարենանք բարբառիլ Արեւմտահայաստանի ազատագրման մասին:

Ինչո՞ւ տօնախմբել հարիւրամեակ մը, երբ մենք ազգի երկուհարիւրամեակի քաղաքական-զաղափարական ծրագրում չունինք, այդ ծրագրումը իւրացուած չէ Յայաստաններու եւ սփիւռք(ներ)ի զանգուածներուն կողմէ: Այդ իւրացման խոչնդոտները արտաքին ուժերը չեն, եւ այս պարզ իմաստութիւնը պէտք Է ուղղութիւն տայ Յայաստանի եւ սփիւռք(ներ)ի խորքային նախաձեռնութիւններուն:

Զարիւրամեակի խանդավառութիւնները եւ նախաձեռնութիւնները ազգային իմաստաւորումով պէտք Է դիմաւորել, այլապէս օր մը եզրակացնողներ կ'ըլլան, որ արդէն ուշ Է, իրապաշտ համարողներ արդէն այդ կ'ըսեն:

Առանց գինովնալու լոյսերով եւ աղմուկով, պատասխանատուներ եւ պատասխանատուութիւններ այսօր կը ճշդուին՝ ի հարկին դէմ երթալով ամէն տեսակ Եւթեայիշմընթային կրկներեւութային խաբուսիկութեան:

Այսինքն, համայնքայինէ եւ թաղայինէ անդին, հասնելու համար ազգային այն բարձրամակարդակ գիտակցութեան, որ միացումներն են ապագայակերտ:

6 յունուար 2018, Նուազի-ը-Կրան



## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Գեղեցիկ արարքները, գեղեցիկ վարքը մեզ էապես կ'երջանկացնեն, մեզ արժանի կը դարձնեն մեր ներքին ԵՍ-ին, ներդաշնակ կ'ըլլան մեր անձի արժանաւորութեան հետ...Միւս կողմէ, որեւէ տգեղ վարք կամ արարք մեզ հոգետանջ ապրումներով կը համակէ, քանզի անիկա կը նսեմացնէ մեր

մարդկային արժանաւորութիւնը մեր սեփական աչքին առջեւ եւ արտայայտութիւն կը գտնէ որպէս Խղճի Խայթ...Գեղեցիկ, ազնիւ վարքագիծն ու արարքը հարազատ արտայայտութիւնն են գեղեցիկ հոգիին եւ կ'երջանկացնեն զայն....

.....

Կարելի չէ խաղալ ժողովուրդին արժանապատուութեան հետ...նսեմացնել զայն, կոխկռտել զայն....Օր մը անպայման կը զարթնու կոխկրտուած արժանապատուութեան զայրոյթը ...եւ կը խելագարուին ամբոխները...

.....

Մարդկային հոգին խորախորհուրդ առեղծուած է...Ամենէն ուրախ պահուն ալ, տխրութեան ամպ-թախիծը կը ստուերէ զայն....Ամենէն տխուր ժամուն, ապրելու հրաշք-խորհուրդով կը շողայ....Փոխ առնելով Մեծարեցի ոգեշունչ բառերը՝ «Այս գիշեր տօն է՝ հոգւոյս կիրակի, Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ-քիչ կը մարի»....քանզի հոգւոյն տօն-Կիրակին անգամ պիտի քիչ-քիչ մարի անյայտութեան մեջ....իսկ ամէն տխրութեան պիտի յաջորդէ մեր «հոգւոյն Կիրակին»....

.....

Մարդուն ներքին կեանքը տեսակ մը ճամբորդութիւն է՝ կեանքի սովորական ընթացքէն, մերթ դէպի խորխորատները տառապանքի ու տխրութեան, մերթ ալ՝ դէպի լուսաշող բարձունքները բերկրանքի եւ երանութեան...մշտական յուզա-իմացական վերիվայրումներու ալեկոծութիւն...ինչ որ ներքին բովանդակութիւն կու տայ մեր կեանքին...

.....

Մաքուր խիղճը մեծագոյն հարստութիւն է...սակայն շատ անգամ ոմանք կը բթացնեն իրենց խիղճը, որպէսզի վերջինը չանհանգստացնէ զիրենք եւ կը խաբէն իրենք զիրենք, ըսելով որ ո՛չ մէկ սխալ գործած են....Անսխալական մարդ չկայ անշուշտ, բայց եթէ պարտականութիւններդ կը կատարես ամենայն պատասխանատուութեամբ, արդարութեամբ, գիտակցութեամբ, ներդնելով մտքիդ, սրտիդ, կամքիդ համակ ոյժը, եթէ ազնիւ ես ու անկեղծ, յայնժամ վաստակած կ'ըլլաս մեծագոյն հարստութիւնը՝ խղճի խաղաղութիւնը եւ կ'ունենաս այն ներքին ոգեկան երջանկութիւնը, որ կը կոչուի նաեւ հոգեկան գոհունակութիւն.... գոր ոչ ոք կրնայ խլել քեզմէ:

.....



Մեծութեան առջեւ կը խոնարհիս, կը զգաստանաս, կ'արթննաս, կ'իմաստաւորես, կ'արժեւորես, կը վերաքննես, կը սորվիս, կ'ընդլայնիս, հուսկ կը մեծնաս....Մեծութիւնը կը մեծցնէ...

.....

Մեր ծնունդէն մինչ ի մահ, մարդ էակը ազատութեան է դատապարտուած....Ամէն պահ, մեր ընտրանքներով կամ չընտրանքներով, մեր արարքներով կամ չարարքներով, ըսուած ու չըսուած խօսքով, գործելով եւ չգործելով, կեցուածք ցուցաբերելով եւ չցուցաբերելով ալ՝ մենք կը կերտենք մեր գալիքը, մեր ապագան....Բացի հազուադէպ աղետներէ, մեզմէ իւրաքանչիւրը եւ մենք՝ հաւաքաբար, պատասխանատու ենք ապագային համար....Ազատութիւնը տրուած է մեզի ի սկզբանէ, ընդունի՛նք կամ ոչ, ուզենք թէ չուզենք...քանզի մարդը ի՛նք կը վերստեղծէ ինքզինք ամէն պահ....

.....

Ձեւի եւ ձեւականութեան մեր ժամանակներուն, մարդ էակը այնքան կարօտը ունի խորքային ճշմարիտ խօսքի, որ արտայայտէ իրա՛ւ ապրումներ, անկեղծ զգացումներ, ինքնատիպ մտքեր....Այլապէս, ամբողջ լրատուական դաշտը եւ անոր յարակից հարթակները ողորդուած են մակերեսային լուրերով, աննշան երեւոյթներով, բան չըսող արտայայտութիւններով, որոնք կարծէք կը միտին մարդկային կեանքը դարձնելու ծանծաղ, դիւրաւ կառավարելի....ի շահ աշխարհակալ որոշ ոյժերու, որոնք անտեսանելի թելերով կը ձեռնավարեն մարդոց կեանքը, անոնց ճաշակը, ապրելակերպը, գիտակցութեան մակարդակը....Կարեւոր դարձած է տեղեկութեանց առատ հոսքը, քանակը ի վնաս եւ ի հաշիւ կեանքը արժեւորող որակի....

.....

Ազատ շուկայ կ'ըսեն եւ ամէն ինչ առք ու վաճառքի ապրանք կը դարձնեն...

Մարդկային իրաւունքներու մասին կը բարբառին եւ ամէն սրբութիւն ոտնակոխ կ'ընեն...

Ազատութեան յանկերգը կ'երգեն եւ մարդը կը ստրկացնեն նիւթին, ինչքին, անասնական կիրքերու յագեցման...

Ժողովրդավարութիւն կը քարոզեն ու էապէս երկիրներ ու ժողովուրդներ կը ստրկացնեն համաշխարհային օլիկարխիայի բռնապետութեան...

.....

Ինքնակազմակերպումը կ'ենթադրէ փոքրիկ ես-երու զիջում յանուն բարձր նպատակի, կ'ենթադրէ խոնարհութիւն փոխան երեւնալու մարմաջի....[այնախոհութիւն՝ մանրութիւնը վեր ելլելու եւ ծառէն անդին անտառը տեսնելու հեռատեսութիւն....հեզութիւն, իրարու նկատմամբ ազնուութիւն, փոխան ինքնահաստատման տխուր դրսեւորումներու....իրարու հետ լեզու գտնելու, զիրար հասկնալու եւ միասին աշխատելու հաւաքական ոգի, պատրաստակամութիւն...: Մենք ազգովին շատ տուժած ենք մեր պատմութեան ընթացքին, մեր փոքրիկ ես-երը գերադաս համարելով հաւաքական շահի թէ նպատակի գիտակցութեան եւ յանձնառութեան...եւ անշուշտ զոհողութեան:



.....

Կեանքը ամեն պահ հոգիի յաղթանակ է, երբ դժուարութիւն մը կը յաղթահարես, երբ հոսանքն ի վեր կը թիավարես, երբ անձնատուր չես ըլլար ամենակուլ յորձանքին, երբ կը դիմադրես չարին, երբ կը մաքառիս ու կը պայքարիս յանուն վսեմ նպատակի, նպատակներու....Յեզասահ կեանքը կեանք ալ չէ, քանզի դժուարութիւններ եւ խոչընդոտներ դիմագրաւելով է որ մարդ էակը, կ'իմաստնանայ եւ յաղթանակի բերկրանքը կրնայ վայելել....

.....

Կեանքը անկաղապար է, բայց մարդը սովորաբար կաղապար կը հագցնէ անոր, զայն սահմանափակելով, զայն պարագծելով...., որպէսզի կարենայ զայն կառավարել, որպէսզի կարենայ իր հակակշիռին ենթարկել զայն....Ի վերջոյ, սակայն, այդ սահմանափակ կեանքը կը դառնայ այնքան տաղտկալի, այնքան ձանձրացուցիչ, նոյնիսկ՝ հեղձուցիչ, տեսակ մը բանտ հոգիին համար....Կեանքի արժէքը էապէս անոր անսահմանութեան մէջ է...

.....

Յայրենասիրութիւն....Բառ նուիրական, զոր կ'օգտագործենք տեղի-անտեղի, ի խորոց սրտի թէ լոկ ցուցադրական, խորապրուած թէ մակերեսային....Բայց ճշմարիտ հայրենասիրութիւնը այնքան խորունկ է, զոր բառարանային բառը դժուար թէ կարենայ պարագրկել անոր ամբողջական իմաստը, արտայայտել անոր ամբողջական էութիւնը....Ներքին կրակ է ան, մշտավառ յոյս, անշէջ լոյս, անմար սէր, նուիրում ու ոգի, որ՝ հասունցող տարիքին հետ, աւելի կը խորանայ, կ'արմատանայ....կը դառնայ գոյութեան իմաստ, գոյութեան խորհուրդ, սրբութիւն սրբոց...Գերագոյն ներշնչարանը մեր ամենէն վսեմ ու վեհ արարքներուն...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Գրական-Մշակութային

### ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԲԱՌԸ...

Բառը լոյս է առաւօտեան

Բառը՝ ժպիտ շողաթաթաւ

Բառը՝ համբոյր է սիրակաթ

Բառը՝ սիրտ է լուսածածան...

Բառը՝ դեղ է ու բալասան

Բառը՝ ցաւաց բուժիչ դարման

Բառը՝ սփոփանք է սիրտէ սիրտ

Բառը՝ հրաշք մխիթարիչ...

Բառը՝ շաղախ է տաճարի

Բառը՝ աղօթք է առ Աստուած

Բառը՝ ճամբան է այն գաղտնի

որ կը տանի դէպ՝ դուռն երկնի

Բառը՝ սիրտերու բանալի

Բառը՝ դիւթանք անքննելի

Չոգիները կապող կամար

երանգավառ ու լուսառատ...

Բառը՝ Բանն ի սկզբանէ



---

Բառը՝ Բանն է արաչաստեղծ..Ե.Գ.

.....

ԼՈՒՍԵՐԳՈՒԹԻԷՆ

Ծառ ու ծաղկանց մէջ

Տերեւներուն մէջ

Գգուանքը անցաւ

Արեւալոյսին...

Դողացին անոնք

Սիրոյ թրթիռով

Մեղմ սիրատենդով

մը քնքշագին..

Մեղեդի մը լոյս

Մեղմիկ, սիրահունչ

Օդին մէջ թրթռաց

զերթ կարօտի յուշ..

Չեփիւռը յետոյ

Շոյեց համբոյրով

Սիրոյ սուրբ տենդով

Տերեւները բիւր...

Լոյսի պատարագ

մըն էր ցնծագին

զերթ սիրոյ ծիածան

Անցաւ սիրտէ սիրտ..Ե.Գ.

.....

ԱՄԲՈՒՆՆԵՐ ԱՆՄԻՏ...

Ամբոխներ անմիտ ու աղմկարար

Յոգիիս զուլալ դուք չմօտենա՛ք

Թողէք որ սլանամ իմ հոգիիս հետ





---

Շնչեմ ջինջ օդը լազուրին վսեմ....

Իմ երազներուս դուք չմերձենա՛ք  
Ձեր լոզունգներով հնամաշ ու կեղծ  
Թողէք որ անոնց լոյսն վարդահեղեղ  
Յոգիս պարուրէ տեսիքովն վաղուան...

Շատ եմ ես լսեր խոստումներ պատիր  
Սուտ աստուածներու ողբն ու կական  
Տեսեր եմ փայլքը ոսկեղէն հորթին  
Թակարդներ անթիւ ու ակնապարար..

Թողէք զիս մենակ իմ լռութեան մէջ  
Անոր բեղմնաւոր ծոցին մէջ միայն  
Կրնան ընծիւղիլ հունտեր լուսեղէն  
Յանուն գալիքի հունձքին օրհնաբաշխ....Ե.Գ.

.....

ԵՐՋԱՆԻԿ ԵՂԱՅ...

Երջանիկ եղայ արարման տենդով  
Լուսոյ խորանին վրայ բառերուս  
Ես գտայ հոգիս բիւրեղեայ խորքով  
Չայն ընծայեցի ձեզի լիաբուռն...

Ոմանք հասկցան ընծան այդ անգին  
Սեղմեցին սիրով գայն իրենց կրծքին  
Ողջագուրումէն այդ սիրահամբոյր  
Յոգիս սլացաւ վեր երկնահամբոյր...



Ուրացողներ կան ու պիտի ըլլան  
Երջանկութիւնն այդ իմըն էր անբաւ  
Երբ ակնթարթին այդ արարչական  
Տիեզերքն անսահման հոգւոյս մէջ մտաւ...Ե.Գ.

.....

### ՅԱՅ ԲԱՌ ՈՒ ԲԱՆԻՆ

Յոգիս պեղեց քեզ շարունակ  
Յայ բա՛ռ ու բա՛ն բազմադարեան  
Խորհուրդն անքնին մէյ մէկ շեշտիդ  
Ուր կայ խռովքը հայ հոգիին  
Յոյզեր, յոյսեր կան տենդավառ  
Բիւր տեսիլքներ ճաճանչափայլ  
Նշխարներ կան մեր մեծերէն  
Մեր քիւրաւոր հերոսներէն  
Յօղ առ ցօղ հոն թանձրացած  
Շունչ առ շունչ կենսաւորուած....  
Մէն մի բառդ՝ հայ հոգեկիւթ  
Մէն մի բառդ՝ հայ սիրանիւթ  
Մէն մի տառդ՝ շող լուսակաթ  
Մէն մի տառդ՝ յոյսի ճաճանչ  
Ուր կը գտնեմ ես իմ հոգիս  
Մայթերուն վրայ օտարոտի  
Աղմուկին մէջ խաժամուժի  
Պապերուս հետ ծիածանուիմ  
Արմատներուս հետ ամրապինդ  
Կ'երթամ դարերը դեռ գալիքի: Ե.Գ.

.....

### ԵՐԱՉՆԵՐՍ ՉԾԵՐԱՑԱՆ



Երազներս չծերացան  
Թեւ ու թռիչք առին, սլացան  
Յոգիս անոնց թեւերուն վրայ  
Ժամանակի բեռը չզգաց...  
Ան չգիտցաւ ու չըմբռնեց  
Որ կայ տարիք ու եղանակ  
Ժամանակէն վեր միշտ մնաց  
Երազանքը ունի՞ սահման...  
Երազներուս հետ կը ճախրեմ  
Կապո՛յտ-կապո՛յտ լազուրին մէջ  
Երազներուս հետ կը թեւեմ  
Յորիզոնին դեմ լուսագեղ...  
Երազանքով գէթ կը գրկեմ  
Տիեզերքն անծիր, արշալոյսներ  
Կը նոյնանամ անհունին հետ  
Յոգիս մէջ զայն կ'ընդգրկեմ...  
Երազանքով լուսաշաղախ  
Երկնի բնակիչ ես կը դառնամ  
Աստղերուն մերձ հիւլէ մը լոյս  
Շողակաթ ու խորհրդալոյս...Ե.Գ.

.....

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ..

Հայրենի հո՛ղ, քեզմէ հեռու, քեզի՛ հետ եմ  
Ունկս լարած սիրտիդ տրոփի՛ն, բազկերակի՛դ  
Շունչիդ հեւքի՛ն, տենդի՛ն, կայծի՛ն, քեզի՛ հետ եմ  
Իմ թանկագին, սրտահատո՛ր, դուն մնայ պի՛նդ...  
Յանուն մեզի, սրբազնագոյն մեռելներուդ  
Յանուն տղոց մեր քաջարի, յանուն վաղուան



---

Դեռ ծնելիք բիւր բիւր քաջաց, կորիւններուն

Յանուն հայուն լինելութեան արարչական

Ստեղծագործ յոյզի՛ն, լոյսի՛ն վստմական

Դուն մնայ վեհ ու անսասան գերթ լեռն Մասեաց... Ե.Գ.

.....

ԵՍ ՉՍԻՐԵՑԻ...

Ես չսիրեցի այս դարի լեզուն

Սիրտի բթացման, հոգուոյ բրտութեան

Քար անխղճութեան, անտարբերութեան

Նիւթի կոյր քաղցի, եսամոլութեան...

Ես չհասկցայ այս դարի լեզուն

Ուր սուտն արժանի է փառք ու պատուի

Կեղծն ու կեղծիքը լոկ թմբկահարուն

Փոխան ճշմարտին, անկեղծ իրաւին...

Ինձ անչափ խորթ է այս դարի լեզուն

Ուր անարդարն է նստած դիրքերուն

Աթոռակալ է լկտի ու դաժան

Փոխան արդարին որ գործէ շիտակ...

Յոգիս կը խրտչի այս դարէն վայրագ

Ուր մարդն յօշոտէ իր նմաններուն

Խժռէ կին ու ծեր, մանուկ ու անկար

Քարացած խիղճով մ'որ չունի անուն...

Եւ սիրտի աղօթքն է այլակերպուած

Շուկայի վարքով ու մամոնայով...



---

Ինձ մնացեր է լոյսիս սուրբ խորանս

Չըլլայ որ պղծեք զայն պիղծ ձեռքերով...Ե.Գ.

.....

ՀՈԳԵԼՈՅՍ ՄՕՐՍ

Աշխարհն ամբողջ սիրածով էր

Սեր-բարութեամբդ հեղեղուած

Արեւաշող ժպիտդ դեռ

Ինձ լոյս կու տայ, սեր ու բերկրանք

Մայր հոգեթանկ...

Կեանքը համակ սիրոյ տօն էր

Քու մեծ սիրտով լուսաւորուած

Կարծես չարը չքացեր էր

Բարութեանդ դեմ յանդիման

Մայր իմ անմահ...

Էութիւնդ սիրաշաղախ

Համակ լոյս էր սիրածորան

Խաւարը մութ անգոյ բան էր

Սերդ միշտ լոյս կը ճառագէր

Մայր իմ լուսէ...

Եւ ես մեծցայ սիրահեղեղ

Սրտիդ սիրով միշտ լիացած

Կարծելով միշտ թէ կեանքի մէջ

Չկայ երբեք սիրտ չոր, անսեր

Մայր անմոռաց....

Գիտեմ հիմա քու կայքէդ ալ

Սիրտդ սիրով կը շողշողայ

Բեկոր մը շող կը կաթէ յար

Թէ քեզ կանչէ սիրտս յոգնած




Մայր ճառագայթ...Ե.Գ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Հայկանուշ Մառք .- Հայ Կնոջ Հասարակական Զարթօնքին Արժանաւոր Պատ-գամաբերը

Ն.



14 Փետրուարի ծնունդ է հայ մտքի եւ գրականութեան երախտաւորներէն, յատկապէս հայ կնոջ հասարակական զարթօնքին արժանաւոր դէմքերէն Հայկանուշ Մառք (1883-1966):

Պոլսահայ հոգեմտաւոր մեծ ժառանգութեան մեջ իր կարեւոր ներդրումը ունի բանաս-տեղծ ու արձակագիր, բայց մանաւանդ յանդուգն

հրապարակագիր Հայկանուշ Մառք, որ իբրեւ այդպիսին արժանի տեղ կը գրաւէ Սրբուհի Տիւսաբի, Չապէլ Ասատուրի, Չապէլ Ե-սայեանի օրինակով մեծանուն հայ կին հեղինակներու փաղանգին մեջ:

Բանաստեղծական խոր զգացողութեան եւ մտաւորական լայն հորիզոնի տեր գրողն է - Մառք, որ ոչ միայն հայ կնոջ յուզաշխարհը շնչաւորող գրականութիւն մը կտակեց մեր ժողովուրդին, այլեւ՝ անխոնջ դրօշակիրը դարձաւ հայ կնոջական շարժման՝ հայ կնոջ իրաւունքներուն պաշտպանութեան նուիրաբերելով իր գրիչն ու իմացական ուժերը:

Կնոջական աշխարհին, հայ կնոջ ընկերային հարցերուն եւ յատկապէս կանացի իրաւունքներուն ու դատին պաշտպանութեան նուիրուած իր հրապարակագրական հարուստ ժառանգութեամբ, յատկապէս իր հոգեգաւակը հանդիսացող «Հայ Կին» թերթով՝ Հայկանուշ Մառք իրաւամբ կը հանդիսանայ քսաներորդ դարու առաջին յիսնամեակին ամենէն աւելի լայն ժողովրդականութիւն վայելող գրիչներէն մէկը:

Հայկանուշ Մառքի գաղափարական կտակը խտացնելու կը ծառայէ «Հայ Կին»ի առաջ-նորդող յօդուածներէն քաղուած հետեւեալ պատգամը.

«Մեր ետին կը թողնենք արահետ մը, որ թէեւ տօնական կամ փայլուն ոչինչ ունի, բայց արահետ է, որուն առանց ամչնալու կը նայինք, գիւղի նեղ արահետ մը, որմով անցած ենք՝ կատարելով մեր պարտականութիւնները իբրեւ կին, իբրեւ ամուսին եւ իբրեւ մայր: Հիմա նոր ուղի պիտի հարթենք, անիկա պիտի ըլլայ քաղաքի լուրջ ճանապարհ մը, աւելի լայն, աւելի ուղիղ, աւելի ծիգ՝ դէպի նպատակը: Այդ ճամբուն վրայ պիտի կրենք մեր պատասխանատուութիւնը, պիտի ստեղծենք մեր իրաւունքները, պիտի դարբենենք մեր գործը՝ ամենեւին չհեռացնելով մեզ մեր կանացի բնագոյներէն, մեր տունէն: Անիկա պիտի տանի մեզ բարձունք մը, ուր կը մղեն մեզ մեր սեռի, մեր ազգի, մեր հայրենիքի վերածնունդին ջղապիրկ իղծերը»:

Հայկանուշ Մառք ծնած է Պոլիս, 14 Փետրուար 1883ին: Ուսումը ստացած է «Եսայեան» վարժարանին մեջ՝ աշակերտելով Չապէլ Ասատուրի, որուն արժանաւոր յաջորդը դար-ձաւ:



Հագիւ երիտասարդ՝ նետուեցաւ ազգային-հանրային գործունեութեան ասպարեզ՝ մէկ կողմէ կնոջական իր ներաշխարհը թրթռացնող քերթուածներ ու արձակ էջեր լոյս ընծայելով, իսկ միւս կողմէ՝ քսաներորդ դարասկիզբի հայ իրականութեան մէջ կնոջական իրաւունքներու պաշտպանութեան եւ ընկերային խնդիրներու արծարծման նուիրուելով:

Հայկանուշ Մառքի կեանքին ու գործունեութեան դարձակետը կազմեց հրատարակութիւնը «Ծաղիկ» թերթին, որ թէեւ լոյս տեսաւ միայն երեք տարի (1905-1907), բայց անմիջապէս ընթերցող գրաւեց ու հայ կնոջական շարժումը խթանող գլխաւոր բեմ մը դարձաւ: Ա-տենի երիտասարդ հայ կին գրողները կապուեցան թերթին եւ թէ՛ գրական-ստեղծագործական, թէ՛ իմացական-բանասիրական մարզերու մէջ իրենց աշխատակցութեամբ՝ կա-նացի շունչ բերին հայ հոգեմտաւոր կեանքի ատենի վերածնունդին:

Հայկանուշ Մառքի կոթողական իրագործումը կը հանդիսանայ հրատարակութիւնը «Հայ - Կին» հանդեսին, որ Առաջին Աշխարհամարտի ակարտէն ետք եւ Մեծ Եղեռնի բացած խորագոյն վերքը դարմանելու առաջադրանքով ճամբայ ելաւ 1919ին եւ շարունակուեցաւ մինչեւ 1932 թուականը: «Հայ Կին»ը կամուրջ մը եղաւ ոչ միայն նախա-Եղեռնեան շրջանի ազգային մեր արժէքներուն հետ նորահաս սերունդներու հոգեմտաւոր կապը ստեղծելու եւ ամրապնդելու առումով, այլեւ՝ արեւմտահայ եւ արեւելահայ, խորհրդահայ ու սփիւռ-քահայ հաղորդակցութիւնը պահպանելու եւ խորացնելու իմաստով:

Հայկանուշ Մառքի գրական ստեղծագործութիւնները, արձակ բանաստեղծութիւններ ու պատմուածքներ, հաւաքուած ու առանձին հատորով լոյս տեսած են «Ծովութեան պահերես» խորագրին տակ: Իսկ «Ծփանքներ կեանքես» խորագրով հրատարակուած հատորի մը մէջ, Հայկանուշ Մառք ներկայացուցած է իր ինքնակենսագրական յուշագրութիւնը:

Ինչպէս իր գրական-գեղարուեստական, այնպէս ալ հրապարակագրական էջերուն մէջ, Հայկանուշ Մառք օգտագործեց յստակութեամբ ու պարզութեամբ յատկանշուող լեզու մը, որ աւելիով ժողովրդականութիւն ապահովեց իր հաճելի գրելաոճին:

1954ին, Պոլսոյ մէջ, մեծ շուքով տօնուեցաւ Հ. Մառքի գրական գործունեութեան յիսնամեակը: Այդ առիթով հրատարակուեցաւ իր բանաստեղծական եւ հրապարակագրական գործերէն ծաղկաքաղ մը՝ «Հայկանուշ Մառք — կեանքն ու գործը» խորագրին տակ:

Հայ գրականութեան եւ հրապարակագրութեան կնոջական ձայնը շնչաւորող եւ հայ կնոջական շարժումը ժողովրդականացնող նուիրեալը ապրեցաւ մինչեւ խոր ծերութիւն: Վերջին տարիներուն առողջական վիճակը վատթարացած էր ու Մառք տեղափոխուեցաւ Պոլսոյ հայոց Ազգային Հիւանդանոցը, ուր եւ վախճանեցաւ 7 Մարտ 1966ին՝ իր սեփական ճոխ գրադարանն ու բոլոր իրեղենները կտակելով Սուրբ Խաչի Դպրեվանքին:

Ոգեկոչելով հայ կնոջական շարժման արժանաւոր պատգամաբերին յիշատակը՝ ահա նաեւ ճաշակ մը անոր բանաստեղծական յուզաշխարհին.

Ինչպէ՞ս

Ինչպէ՞ս սիրեմ զքեզ, սիրելիս

Որ սերս ըլլայ միշտ տեւական ու տարբեր,

Ինչպէ՞ս սիրեմ զքեզ, իմ հոգիս,





---

Որ նմանը չըրած ըլլան ուրիշներ ...:

Ինչպէ՞ս, ըսէ՛, երազեմ քեզ որ յոգևած

Չծանրանան աչքերս արթուն ու ցած

Ձայներն չվրդովեն հանգիստ – քուն՝

Երբ մտնեմ քուն :

Ինչպէ՞ս գգուեմ զքեզ սերովս թողոր,

Որ նախանձին սիւքերը, ծիլերն ալ ուր ,

Ինչպէ՞ս կազմեմ տարրերը սիրոյս կրակին

Որ հոն բոլոր իղձերս ալ բորբոքին:

Ինչպէ՞ս ըսեմ թէ չաստուած մ'ես դուն կամ անկէ

Աւելի վեր,

Յոգի մը վառ կրակէ,

Անձնուէր...

Ինչպէ՞ս սակայն ինչպէ՞ս սիրեմ քեզ, անոյշ սիրական

Որ սա իսենթ սերս ըլլայ յաւետ տեւական:

«Լոյս», 1904

Աղբիւր՝ Հայրենիք շաբաթաթերթ

## Նաեւ դիմադրութեամբ

### Գրեց՝ Սեւան Տէյիրմենճեան



Թուրքիոյ մէջ աւելի քան 30 լեզու կը խօսուի: Այս 30-ի շարքին կան լեզուներ, որոնց անունն իսկ թերեւս անծանօթ է մեզի, օրինակ՝ կապարտայերէնը կամ, ըսենք, ադիկերէնը, որոնք չերքեզական լեզուներ են: Ի՞նչ տարբերութիւն, օրինակ, ապագրէնի կամ արխագրէնի միջեւ: Կան դեռ

ռոմանական լեզուները՝ տոմարին ու ռոմանին: Չկարծուի, որ քանի մը հոգի կը խօսի այս լեզուները. օրինակ, ադիկերէն կը խօսին 316 հազար, իսկ կապարտայերէն՝ միլիոն մը քաղաքացիներ, տոմարին ու ռոմանին շուրջ 100 հազար քաղաքացիի մայրենին է: Ապագրէն կը խօսին 12 հազար, արխագրէն՝ 150 հազար մարդ: Կայքէջը, ուրկէ կը քաղեմ այս տուեալները, կու տայ նաեւ այս եւ միւս լեզուներուն Թուրքիայէ դուրս ունեցած տարածումին մասին գիտելիքներ ալ: Հայերէնը, արեւմտահայերէն ու վերջին տարիներուն արեւելահայերէն իր ճիւղերով, մէկն է այդ աւելի քան 30 լեզուներու շարքին: Առաւելաբար լսելի է Պոլսոյ մէջ, ինչպէս նաեւ, հազուադէպ իսկ ըլլայ, գաւառի քանի մը նախկին հայաշատ քաղաքներուն կամ գիւղերուն մէջ: Կայ նաեւ հայերէնի Համշէնի բարբառը, որ այսօր համշէներէն անուան տակ առանձին լեզու մըն է գրեթէ: Ոմանք գիշեր ու գօր, անդադար, եղերամօր սեւազգեստ հագած լեզուի նահանջին կամ մահուան մասին իսկ խօսին, Պոլսոյ մէջ հայերէնով գիրքեր ու պարբերականներ կը հրատարակուին, մարդիկ կ'աղօթեն այդ լեզուով (կան աղօթատեղիներ), կ'երգեն (համոյթներ, երգչախումբեր կան), կը խօսին: Ի տարբերութիւն Թուրքիոյ միւս լեզուներուն, զոր օրինակ աւելի քան 10 միլիոն քաղաքացիի մայրենին հանդիսացող քրտերէնի կամ աւելի քան 5 միլիոնի մայրենին նկատուող զազայերէնի, հայերէնը որպէս մայրենի լեզու կ'ուսուցանուի Պոլսոյ հայկական 17 դպրոցներուն մէջ: Անշուշտ, ասոնք հիմա մեր ձեռքին մնացածներն են անցեալ դարասկզբի աւելի քան 60-էն: Հանրապետական շրջանի ճնշումի քաղաքականութիւնը, որ սխալ պիտի չըլլայ Ցեղասպանութեան շարունակութիւնը նկատել, նաեւ այս կերպով տուած է իր արդիւնքը: Բայց հիմա ճնշումի յիշեալ քաղաքականութիւնը կարծեք դիմակ փոխած կը հալածէ մեր դպրոցները: Պարոնները անընդհատ «բարեխնամ կառավարութեան» որպէս շնորհ մեզի վերադարձուցած կալուածներուն խօսքը կ'ընեն: Պարոն մը «ամէն բանէ առաջ խորապէս երախտապարտ պետք է ըլլանք մեր պետութեան» կ'ըսէ, մինչդեռ նոյն այդ պարոնը երկու օր առաջ յայտարարած է, թէ «դպրոցներուն թիւը շատ է, վաղը ոչ մէկ դպրոց պիտի ունենանք»՝ առաջարկելով միացնել զանոնք (միտքերու այս հոսքին հետեւիլը մահկանացուներու համար անկարելի է անշուշտ): Մեր մեծ վարժարաններէն մէկը, որով կամայ-ակամայ, գիտութեամբ-անգիտութեամբ կը հպարտանայ համայնքը, մուրացիկի մը նման դրամ կը մուրայ ոտքի մնալու համար: Միւսներուն ալ վիճակը տարբեր չէ ատկէ: «Մուրացիկի մը նման» արտայայտութիւնը չգայթակղեցնէ ոեւէ մէկը, ասիկա երբեք իր



ամօթը չէ, այլ անոնց, որոնք այդ վիճակին մատնած են զայն: «Դպրոցներուն դրամ պիտի չտամ այնքան ժամանակ, մինչեւ որ ընդունուի զանոնք միացնելու իմ առաջարկս»: Բարերար պարոնի մը խօսքն է: Կը զգաք չէ՞ սպառնալիքի երանգը, որ պահուած է այս նախադասութեան ետին: Կարծեք ան հիմնած է մեր դպրոցները, կարծեք ան ոտքի կը պահէ զանոնք, կարծեք իր պարտադրել ուզածը ըլլար միակ լուծումը... Համայնքային հաստատութիւնները, հարկւրամեակներու անցեալ ունեցող վարժարանները իրենցմէ կախեալ դրութեան մէջ պահելու եւ այդ հաստատութիւններու միջոցով իրենց հեղինակութիւնը բանեցնելով համար արդէօք բարերար անունին տակ ծպտեալ չարարարները միասնական պիտոճէի մը ծրագիրը կը վիժեցնեն տասնամեակներէ ի վեր: Անոնք իրենց եսասիրական զգացումներուն յագուրդ տալով համար է, որ այսքան դժուարութիւններու կը մատնեն մարդիկն ու կառոյցները: Այլապէս այսքան առատութեամբ հանդերձ դեռ ինչո՞ւ կը շարունակուին նոյն դժուարութիւնները՝ միշտ նոյն հաստատութիւններուն համար:

Անընդհատ կալուած կը վերադարձուի, անընդհատ մեզմէ շնորհակալութիւն յայտնել կը պահանջուի, սակայն նոյն անընդհատութեամբ վարժարաններու նիւթական վիճակը կը քննարկուի, նոյն անընդհատութեամբ վարժարանները դրամ կը պահանջեն: Հոս սխալ մը կայ անշուշտ եւ վստահաբար այդ սխալին պատասխանատուն համայնքին վարիչ դասակարգն է: Վարժարաններէն շահ ակնկալող ոմանց պէս, լեզուէն իրենց շահն ու հեղինակութիւնը ապահովողներ ալ կան դժբախտաբար: Չարմանալիօրէն անոնք, որոնք ամենաշատ ախուվախը կը բարձրացնեն, գրողի, կարդացողի պակասէն կը դժգոհին, պահ մը իսկ չեն դանդաղիր իրենց գրած-տպածներուն վրայ, չեն իսկ մտածեր իրենց գրած-տպածներուն կարդացուելիք բաներ չըլլալու հաւանականութեան մասին: Լեզուն մտածումի, քննարկումի, ընդդիմանալու, քննադատելու հասկացութիւն մը ըլլալէ դադրեցուցած ու զայն վերածած են համակերպումի, ընդունումի, հնազանդումի, երախտագիտութիւն յայտնելու, քաղաքավարութիւն բանեցնելու միջոցի մը: Չեն գիտակցիր նոյնիսկ, որ իրենց այդ քուրթուկուշցի թանթիկի կոտորտուող լեզուն չի կրնար այսօրուան ոգիին պատեան դառնալ (գործածելով Չարենցի տողերը): Չէ, դուք ոչ թէ լեզուն ապրի կ'ուզէք, այլ կ'ուզէք որ ձե՛ր լեզուն ապրի: Մայրենիի միջազգային օրուան առթիւ զիրար շնորհաւորելէ առաջ մեր երիտասարդները պէտք է տոգորենք լեզուի ազատութեան գաղափարով, պէտք է մղենք զանոնք խօսելու եւ գրելու: Խօսելու եւ գրելու ո՛չ թէ մեր ուզած ձեւով, այլ իրենց ուզած: Կարդալու ո՛չ թէ ժամանակավրէպ ձաբռտուքներ, այլ բաներ, զորս իրենք պիտի ստեղծեն, իրենք պիտի տպեն: Վարժարան-եկեղեցի-մամուլ ծամծմուած, սիւսկ կարգախօսը բռնանալու, կաշկանդելու ձեւ մըն է անոնց ազատութիւնը: Արդէօք այս ըսողները նոյն ոգեւորութիւնը պիտի ապրե՞ն երբ տեսնէին, թէ երիտասարդները իրենց որդնտած վարժարաններուն, մինչեւ կոկորդը ցեխի մէջ թաղուած եկեղեցիին ու հնաբոյր մամուլին տեղ նո՛ր վարժարան, նո՛ր եկեղեցի եւ նո՛ր մամուլ մը կը ստեղծեն: Վստահաբար ո՛չ: Լեզուն կենդանի է դիմադրութեամբ: Լեզուն կ'ապրի ազատութեամբ: Եւ լեզո՛ւն է, որ կը ստեղծէ դիմադրութիւնը եւ ազատութիւնը...

narekian2000@yahoo.com

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

### ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Տարագիր մարդը կես մարդ է իրօք  
Ցաւ ունի հոգւոյն, կարօտի մորմոք  
Թէ ան ունենայ պերճաւիայլ տուներ  
Հայրենի օճախն ունի սրտին մէջ...Ե.Գ.

.....

Ազատութիւնն ձգտում է լոկ  
Մենք չենք ծնիր ազատ կամքով  
Չենք ալ մեռնիր ազատ կամքով  
Շղթայուած ենք ճակատագրով...Ե.Գ.

.....

Անկեղծութիւնն ցոլքն է հոգւոյն  
Վճիտ ինչպէս սարի աղբիւր  
Որ ցոլացնէ ծառ ու տերեւ  
Իր ջուրերու հայելոյն մէջ...Ե.Գ.

.....

Որքան սուզուիս հոգիիդ մէջ  
Տարածուիս դուն տիեզերքի մէջ  
Քանզի հոգին տիեզերք մըն է  
Չայն հոգւոյդ մէջ դուն կը գտնես...Ե.Գ.



.....

Կեանքը որպէս մի ակնթարթ  
Պիտի երթայ ու շուտ անցնի  
Գուցէ որպէս յուշ մը մնայ  
Յիշողութեան տիեզերքի...Ե.Գ.

.....

Ցաւը աղբիւր է անսպառ  
Սիրոյ, գութի եւ բարութեան  
Ցաւն զգալով կրնաս միայն  
Այլոց ցաւին զգալ կարեկցանք...Ե.Գ.

.....

Ցաւը ներքին քեզի պահէ  
Չայն մի բաժներ ուրիշի հետ  
Եթէ բաժնես, յետոյ զոջաս  
Ոչ ոք կրնայ քեզ հասկնալ...Ե.Գ.

.....

Առանց գիշերուան, չկայ այգաբաճ  
Առանց տրտմութեան՝ ուրախութեան պահ  
Առանց բաժանման՝ հանդիպման հրա՛ջք  
Առանց մեռնելու, ապրելու բերկրանք...Ե.Գ.

.....

Տօնը պատրանք, հեքիաթ ունի  
Առօրեայէն գէթ շեղուելու  
Ուրախութեան փոքր պահիկ  
Ինքնախաբկանք պարգեւելու...Ե.Գ.

.....

Թէ պայծառ արեւ ու ջինջ երկինք է  
Շատեր ման կու գան եւ ընկեր կ'ըլլան



---

Թէ օղն ամպոտի, երկինքը մթնէ

Շատեր կը քեն, թողուն քեզ միևակ...Ե.Գ.

.....

Շատ կան ընկերներ՝ կեանքիդ ուղեկից

Բայց թէ սայթաքիս, ոտքդ քարին տաս

Ձեռքդ բռնողն է ընկեր ճշմարիտ

Միւսները լոկ կան, կու գան ու կ'երթան...Ե.Գ.

.....

Ժլատ հոգի չեղայ բնաւ

Մէկին տասը հատուցեցի

Մէկը բաւ էր տասիս դիմաց

Բայց քիչ անգամ ես զայն գտայ...Ե.Գ.

.....

Բարի՛ հոգիներ, ձեզ լաւ կը ճանչնամ

Ձեր ճաճանչները՝ շող արեգական

Կը շոյեն հոգիս, կը ջերմացնեն զայն

Դուք սփոփանք հոգւոյս, անոր օթեւան...Ե.Գ.

.....

Սիրտը սրտին երբ ընկեր է

Սիրտը սրտին երբ կը սիրէ

Կեանքի բեռը երգ կը դառնայ

Երգը՝ վերջին բոյժ բալասան...Ե.Գ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ